Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

1(394)
20.01.2015
Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՆԵՏՈՂՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Արդեն հետևում են մնացել Ամանորի տոնական միջոցառումները, կրկին մտել ենք առօրյա աշխատանքային ռիթմի մեջ: Այն բոլոր մաղթանքները, որոնք հնչել են Նոր տարվա առիթով, ակնկալում ենք իրականացված տեսնել արդեն այս տարվա ընթացքում: Շատ բան հենց մեզանից է կախված, քանզի մաղթանքները բխում են իրական պատկերացումներից, և եթե ուզում ենք մեկս մյուսի հաջողություններով իսկապես ուրախանալ, հարկավոր է թնութիկունք լինել իրար: Սա մարդկային հարաբերությունների պարզ բանաձևն է, որը պետք է դառնա յուրաքանչյուրիս կենսակերպը:

Ի՞նչ է խոստանում մեզ 2015 թվականը: Այծը չինական օրացույցում համարվում է 8-րդ տարրը, այն միաժամանակ չինական համոզմունքների տեսակետից համարվում է երջանիկ թիվ, որն իր հերթին ենթադրում է բարեկեցություն և խաղաղություն: Այս երկուսը, սակայն, կարող ենք ապահովել մեր աշխատասիրության, պատասխանատվության, հաստատակամության և, անկասկած, հայրենասիրության լիարժեք դրսևորումներով: Ասել է թե՝ պետք է ապավինենք սեփական ուժերին, որովհետև պատմությունը ցույց է տվել՝ մենք միշտ հաղթանակների ենք հասել, երբ հույսներս դրել ենք մեզ վրա: Մեզ մարտահրավերներ նետում է ռեալ իրականությունը, այլ ոչ թե կենդանակերպի նշանները:

Միով բանիվ, առաջնորդվենք ոչ թե աստղագուշակություններով, այլ հստակ ծրագրենք մեր անելիքներն ու համատեղ կցվենք դրանց լուծմանը: Միայն այս պարագայում կարող ենք տարեմուտին գոհունակությամբ մատնանշել մեր հերթական հաջողությունների մասին, անկախ նրանից, թե տարին ինչ կենդանակերպի տակ է անցել:

Բարի՜ մեկնարկ բոլորիս:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԱՍԵՐԸ

Այն փաստը, որ բարությունը մեր ազգային էության համամարդկային գծերից է, և որ մեր պատմության էջերը հարուստ են բարության մարմնացում հանդիսացող նշանավոր գործիչներով, մեկ անգամ ևս հաստատվեց Հացի և Խանցք գյուղերի հիմնական դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար:

Հունվարի 3-ին ակադեմիկոս Գրիգորի Գաբրիելյանցը Հացի և Խանցք գյուղերի աշակերտների համար իրականություն դարձրեց մեր մանուկների մեջ արմատակալած... և Նոր տարվա հետ կապված հրաշքի գոյությունը:

Կյանքում լինում են նման անհատներ, որոնք հենց իրենք են իրենց ապրելակերպով ու գործունեությամբ մարդկանց տանում դեպի նոր ու դրական որակների: Շփումը նման մարդկանց հետ կարծես ուրախության արև է բերում:

Մեր ճանապարհորդությունը սկսվեց վաղ առավոտյան: Մեր գյուղից մինչև հարևան գյուղերն ու Ստեփանակերտ ձգված ոլորմոլոր երթուղին աշակերտների համար ճանաչողական էքսկուրսիա դարձավ: Առաջին կանգառը, Ասկերան քաղաք չհասած, «Տանկ» հուշարձանի մոտ էր: Նորից կարևորվեցին քաջության, ազգասիրության, անկախության ու խաղաղության գաղափարները: Կարծում եմ՝ աշակերտների մոտ բնական մի հարց առաջացավ՝ ի՞նչ պետք է անի այսօրվա սերունդը՝ նախորդների արժանի ու վստահելի հետնորդը դառնալու համար:

Եթե հաշվի առնենք, որ պատմությունը տվյալ ժողովրդի հավաքական հիշողությունն է, ապա ազգային ու անձնային որակների ձևավորման գործում նման ոչ պաշտոնական, մարդկային հարաբերությունների շրջանակներում կատարվող դաստիարակչական աշխատանքները մեծ դեր են կատարում:

Հաջորդ կանգառը տոնականորեն զարդարված Վերածննդի հրապարակում էր՝ հանրապետության գլխավոր տոնածառի մոտ: Սովորաբար տոնածառի մոտ ակամայից մտածում ես, որ հիմա բոլորովին նոր բան է սկսվելու, մի հեքիաթային իրողություն:

Եվ այդ հեքիաթը իրականություն դարձավ հարգարժան Գ.Գաբրիելյանցի շնորհիվ: Հայտնվեց Ձմեռ պապը՝ տոնական տրամադրությամբ ու նվերներով:

Մեր երեխաները պատկերավոր ու գեղեցիկ խոսք շատ են սիրում և այդ պատճառով մի առանձին ոգևորությամբ էին պատասխանում Ձմեռ պապի հարցադրումներին, ասմունքում, երգում, շուրջպար բռնում:

Այդ պահին կարծես թե երկրագնդի վրա Արցախից լավ տեղ չկա, և ոչ միայն այդ. նման պահերին մեծանում է հավատը սեփական ուժերի և վաղվա օրվա նկատմամբ:

Բացի այդ ամենից, մեր փոքր գյուղի դպրոցի աշակերտները այսօր օգտվում են ցանկացած տեղեկատվություն համացանցի միջոցով հեշտությամբ ձեռք բերելու հնարավորությունից:

Մեր ուսուցչական կոլեկտիվը երախտապարտ է, որ այսօր նոր հնարավորություններ ունի դասապրոցեսը ավելի ակնառու ու մատչելի դարձնելու, նոր մեթոդներ կիրառելու գործում:

Մենք ուրախ ենք, որ ոչ մի պարագայում, անկախ աշակերտների թվաքանակից, միայնակ չենք:

Շնորհակալություն Ձեզ, պարոն Գաբրիելյանց:

Աստծո աջը Ձեզ հովանի:

Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հացու հիմն. դպրոցի տնօրեն

ԴՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄԸ՝ ՀՈՒՍԱԴՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Դեկտեմբերի 2-ից 12-ը ԼՂՀ ԿԳՆ ԿՊ տեսչության հանձնաժողովն իրականացրեց համալիր ստուգումներ Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցում: Արդյունքների ամփոփման կապակցությամբ հրավիրված դպրոցի մանկավարժական խորհրդի նիստին մասնակցում էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը: Ստուգումների արդյունքների վերաբերյալ ընդարձակ վերլուծությամբ հանդես եկավ ԿՊ տեսչության պետ Սոս Արզումանյանը:

Նախորդ ստուգումից հետո, որն անցկացվել էր հինգ տարի առաջ, տեսչապետի հավաստմամբ, դպրոցում շատ փոփոխություններ են եղել: Զգալի չափով հարստացվել է ուսումնանյութական բազան, ստեղծվել են նոր առարկայական կաբինետներ: Պատահական չէ, որ դպրոցը, մասնակցելով 2014 թ. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթին, հաղթող է ճանաչվել «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում:

Կապված կրթօջախը ավագ դպրոցի վերակազմավորման հետ՝ բնական է աշակերտական թվակազմի ավելի քան 2 անգամ կրճատվելը (998 աշակերտից՝ 466 աշակերտ, դասարան-կազմերի քանակը՝ 40-ից՝ 23):

Մանկավարժական հանրույթում մեծ թիվ են կազմում ճանաչված և փորձառու ուսուցիչները: Տեսուչների կողմից ստուգված 61 ուսուցիչներից 33-ի (54 %) աշխատանքը գնահատվել է «լավ», մնացած 28-ինը՝ «բավարար»:

Տեսչապետի գնահատմամբ՝ առաջընթացը նկատելի է բոլոր ուղղություններով՝ աշխատանքների պլանավորումից մինչև ներդպրոցական վերահսկողության ուժեղացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Ամենից կարևորն այն է, որ նախորդ ստուգման ժամանակ վեր հանված սխալների ու բացթողումների զգալի մասը վերացվել է: Բայց կատարված դրական աշխատանքների հետ միասին ստուգումների ընթացքում կրկին ի հայտ են բերվել որոշակի սխալներ, թերություններ, բացթողումներ, որոնց վերացման համար հանձնաժողովի կողմից տրվել են համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ: Դա հատկապես վերաբերում է աշակերտների շարժի, ուսուցիչների բաց թողած ու փոխարինված ժամերի հաշվառման մատյանի ճիշտ վարման և մյուս կարևորագույն մատյաններում ու գրքերում առկա թերությունների վերացմանը: Մասնավորապես, ճիշտ չէ, որ բաց թողած ժամերի փոխարինումը կատարվում է պատահականության սկզբունքով, այսինքն՝ ազատ ուսուցչին ուղարկում են հանպատրաստից փոխարինելու այս կամ այն ժամը: Նույնիսկ այդ եղանակով նախորդ ուսումնականում բաց թողնված 1595 ժամից փոխարինվել է միայն 1008 ժամը կամ 63,2%-ը, 2014-2015 ուստարվա սկզբից բաց է թողնվել 331 ժամ, փոխարինվել է 153-ը կամ 50%-ը: Նման կարգի փոխարինումները զեկուցողը որակեց որպես ոչ նպատակային, ինչը ոչ մի կերպ չի կարող նպաստել դասավանդման որակի բարձրացմանը:

Նշվեց, որ անհարգելի բացակայումները դպրոցի ցավոտ կողմերից են: Դպրոցի տնօրինությունը, դասղեկները, առանձնապես ՄԿԱԳՏՏ-ը ու աշակերտների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը լուրջ անելիքներ ունեն անհարգելի բացակայությունների քանակը հնարավորինս նվազագույնի հասցնելու համար:

Տեսչապետը փաստեց, որ տնօրինության աշխատանքներում ամենադրական տեղաշարժը արձանագրվել է ներդպրոցական վերահսկողության ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ ներդպրոցական վերահսկողության հիմնական ձևերը եղել և մնում են դասալսումները, տնօրենական գրավորների անցկացումը, տարաբնույթ թեմատիկ ու համակողմանի ներքին ստուգումները և այլն: Դա հաստատում են հետևյալ փաստական տվյալները. եթե նախորդ ստուգումների ընթացքում տնօրինության կողմից դասալսումների նորման կատարվել է մոտ 50 %-ով, ապա նոր տնօրինության կողմից 2013-2014 ուստարում դասալսումների պլանը կատարվել է 91,6 %,-ով, ընդ որում՝ տնօրենի տեղակալների կողմից՝ համարյա 100 %-ով:

Տեսչապետը ուշադրություն հրավիրեց այն բանի վրա, որ ոչ միշտ են դասալսումները կատարվում պլանաչափ ու նպատակային: Դասալսումների որակը լավ կամ բավարար է, բայց լավ չէ, որ դիտողությունները մնում են թղթի վրա:

Զեկուցողը մատնանշեց ՄԿԱԳՏՏ-ի կողմից դասղեկական ժամի ոչ պատշաճ վերահսկողությունը, որի հետևանքներն էլ պարզորոշ երևացին համալիր ստուգումների շրջանակում հանձնաժողովի կատարած ստուգայցի ժամանակ: 9 դասղեկական ժամերից միայն 2-ն էր անցկացվում, մնացածում աշակերտներ չկային: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ աշակերտների մի մասի մոտ գիտակցական կարգապահության մակարդակը ցածր է, ինչը իր բացասական ազդեցությունն է թողնում ուսումնական ողջ գործընթացի վրա: Դպրոցում դեռ տարածված է ծխելու արատավոր երևույթը:

2013-2014 ուսումնական տարվա միջին առաջադիմությունը կազմել է 100 % բոլոր առարկաներից, որակը՝ 15 %:

Տնօրենի ու նրա տեղակալների կողմից թույլ է իրականացվում վերահսկողությունը աշակերտների գիտելիքների գնահատման կարգի պահանջների նկատմամբ, ինչի մասին է վկայում օրագրերի վիճակը: Եթե օրագիրն էր այն միակ միջոցը, որն ապահովում է ամենօրյա կապը ուսուցչի և ծնողի միջև, ապա այժմ ավելացել է նաև 2-րդ միջոցը՝ էլեկտրոնային մատյանների և օրագրերի՝ dasaran.am միջոցով կապը: Սակայն վերջերս նախարարի կողմից անցկացված ստուգման արդյունքում պարզվել է, որ դպրոցի ուսուցիչները թերանում են իրենց պարտականությունները կատարել նաև այս նոր տեխնոլոգիական տարրի գործարկման ընթացքում. dasaran.am ծրագիրը կատարվում է ընդամենը 56%- ով:

Չի գոհացնում ուսուցիչների կողմից կատարված փոխադարձ դասալսումների քանակը: Նախորդ ուստարում անցկացվել է 140 համակարգչային դաս, այս ուսումնականում՝ ընդամենը 57 ժամ, ընդ որում՝ այդ 197 ժամից 74-ը կամ մոտ 38 %՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչների կողմից: Ռուսաց լեզվի ուսուցիչները անցկացրել են ընդամենը 31 ժամ, մաթեմատիկայի՝ 24 ժամ, պատմության՝ 27 ժամ, մնացած առարկաներից՝ շատ քիչ քանակով:

Դժգոհության տեղիք է տվել նաև մեթոդմիավորման աշխատանքային պլանների վիճակը, որոնց մեծ ձևական բնույթ է կրում:

Մի շարք ընդգծված բացթողումներ ու թերություններ են վեր հանվել մանկխորհի աշխատանքներում. ոչ մի անգամ մանկխորհում չի քննարկվել դպրոցական բաղադրիչի բաշխման հարցը, շատ հազվադեպ են ելույթ ունենում ուսուցիչները, քննարկվող հարցերը հիմնականում ներկայացնում է դպրոցի տնօրենը, նույնիսկ այն հարցերը, որոնք պարտադիր կերպով պետք է ներկայացնեն նրա տեղակալները: Կան կարևոր հարցեր, որոնք քննարկվել են, բայց լիարժեք որոշումներ չեն կայացվել:

Ստուգումները ցույց են տվել, որ դպրոցի տնօրինության, մանկավարժական հանրույթի կողմից որոշակի աշխատանքներ են տարվում արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների դրվածքի բարելավման ուղղությամբ:

Տեսչապետը օլիմպիադաներում ունեցած աշակերտների արդյունքները համեստ գնահատեց: Նախորդ տարիների համեմատությամբ որոշակի առաջընթաց կա, բայց բավարար համարել չի կարելի: Դպրոցի ուսուցիչները լուրջ անելիքներ ունեն առանձին առարկաների նկատմամբ հակում ունեցող, օժտված աշակերտներին խորացված գիտելիքներ տալու և առարկայական օլիմպիադաներին նախապատրաստելու համար:

Տեսչական գրավորների վերլուծությունը թվային տվյալներով ներկայացնելով՝ Ս. Արզումանյանը այն եզրահանգումն արեց, որ ուսումնառության մակարդակը, որոշ բացառություններով, համարյա բոլոր դասարաններում հեռու է բավարար լինելուց:

Ելույթ ունենալով մանկխորհում՝ քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կ. Մարգարյանը ողջունեց այն փաստը, որ նախորդ ստուգումից մինչև այսօր դպրոցում շատ բան է փոխվել դեպի լավը՝ գիտելիքների, հոգեբանական, մանկավարժական, վերաբերմունքի և այլնի առումով:

☞2

ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾԸ ՉԷ

Չգիտեմ՝ ո՛վ ինչպես, բայց ես ուշիուշով կարդացել եմ «Լուսարարի» դեկտեմբերի 2-ի (հ. 34, 2014թ.) համարը ու հանգել այն մտքին, որ առաջիկա երեքչորս տարիներին անճանաչելիորեն փոխվելու է մեր հանրակրթական դպրոցը: Փոխվելու է իր էությամբ, իր բովանդակությամբ: Այսպես ասելու հիմքեր կան. կարդացեք, խնդրեմ, «Շարժում, որ պետք է բարձրացնի կրթությունը, վերափոխի հասարակությունը» ընդհանուր խորագրի տակ տեղ գտած հիմնավորումները, մեկնաբանությունները, բացատրությունները ու կհամոզվեք: Կհամոզվեք կրթության գերազանցության ազգային ծրագրի(ԿԳԱԾ) էության մեջ: Նշենք, որ ծրագիրը այն բառը չէ, սա ավելի շուտ առաքելական ոգով կատարվելիք գործ է, որի հիմքում ընկած է ազնիվ մի գաղափար՝ որակապես և էապես բարձրացնել հայկական հանրակրթության որակը, այն համապատասխանեցնել աշխարհում գործող ամենաբարձր չափանիշներին՝ հիմքում ունենալով մեր ազգային արժեքները:

Եկեք ճիշտն ասենք: Սովորաբար, երբ բարեփոխումների անվան տակ ուզում են կրթական համակարգում որևէ ծրագիր, նորություն մտցնել, մարդիկ (ուսուցիչներ, ծնողներ) տարակուսում, դժգոհում են՝ ասելով՝ է՜, ի՞նչ պիտի անեն, կամ մի նոր առարկա են ավելացնելու, կամ...

Բայց զգացվում է, որ այս մեկն ուրիշ է: Ասել է թե՝ հուսախաբ չենք լինի: Համենայն դեպս, ես այսպես եմ մտածում: Նշաններ կան: Ծրագիրն իրականացնում են ՀՀ կառավարությունը և «Այբ» կրթական հիմնադրամը: Այն ունի նաև միջազգային գործընկերներ՝ Քեմբրիջի համալսարանը և Լոնդոնի կրթության ինստիտուտը: Այսինքն՝ ազգային լինելով հանդերձ՝ հետապնդում է միջազգային որակական չափանիշներ: Ի՞նչն է ստիպել, դրդել սկսելու հանրային քննարկումները, Ծրագրին վերաբերող լսումները: Ամենից առաջ այն, որ մեր հասարակության մեջ կա բավական մեծ պասիվություն կրթության նկատմամբ, մի բան, որը, մեղմ ասած, հաճելի չէ: Ոչ ոք իրավունք չունի ասելու՝ կրթությունն իմ գործը չէ:

Ասել կուզի, որ կրթությունը միայն ուսուցչի գործը չէ: Այն բոլորի գործն է: Այլ կերպ ասած՝ ամբողջ հասարակությունը տեր պիտի կանգնի կրթությանը: Ոչ ոք իրավունք չունի անտարբեր լինելու գրի ու գրքի, դպրոցական զանգի անուշ ղողանջի, ուսուցչի՝ մատաղ սերնդի միտքը կրթողի, նրան ճիշտ ուղի ցույց տվողի նկատմամբ: Միշտ պիտի հիշել, որ դպրոցը դպրո՛ց է բոլորի համար, այնպես, ինչպես սուրբ տաճարը, եկեղեցին: Ու որպեսզի կրթությունը զարգանա, վերելք ապրի, յուրաքանչյուրը պիտի օգնության իր բաժինն ունենա՝ համոզված լինելով, որ կրթությունից, կրթվածությունից է կախված մեր ապագան:

Ու այս հսկայածավալ, դժվարին ու պատվաբեր աշխատանքի կենտրոնում պետք է կանգնած լինի ուսուցիչը: Լավ ուսուցիչը դպրոցի (ու՝ ոչ միայն) ամենամեծ հարստությունը, ամենամեծ ուրախությունն է: Վարպետի խոսքը հիշենք. «Հզոր է այն ազգը, որ ունի հզոր ուսուցչություն»: Ուսուցիչը, իհրավի, աստվածահաճո գործ է կատարում: Ու երբ մենք ասում ենք՝ ուսուցիչ, մեր աչքի առաջ կանգնում է Մեսրոպ Մաշտոցը: Ասել է թե՝ ամեն ուսուցիչ պիտի ձգտի գոնե ինչ-որ չափով նմանվել այդ գերագույն կերպարին: Կատարելատիպը պետք է լինի Մաշտոցը: Բայց մենք ուսուցիչ ենք կոչում նաև մեր Տեր Հիսուս Քրիստոսին, այսինքն՝ Աստված ինքն է դարձել մեր ուսուցիչը: Եվ, իսկապես, ո՞վ կարող է սովորեցնել, եթե ոչ ինքը՝ Աստված: Նոր-նոր ծիլ տվող այս ծրագիրը գերագույն մի նպատակ ունի՝ կարևորել ուսուցչի դերը, քանզի լավագույն կրթությունը կարելի է ապահովել միայն ու միայն լավագույն ուսուցչի շնորհիվ: Հետևություն. ինչքան կիրթ, խելոք, բարձր լինի ուսուցիչը, այնքան բարձր կլինի դպրոցը, այնքան դյուրին, արդյունավետ կլինի ուսումնական գործի կազմակերպումը: Դե իսկ, որպես կանոն, խելոք ուսուցիչ դառնում է խելոք աշակերտը: Շատ է ցավալի, որ երբեմն բարձրագույնի դռները բացվում են նաև այն դիմորդների առջև, որոնք միջնակարգին հրաժեշտ են տվել ցածր նիշերով: Եվ ի՞նչ: Մի կերպ քարշ գալով՝ պետական են հանձնում, դիպլոմ ստանում, մատյանը վերցնում ձեռքն ու ... դասարան մտնում:

Խե՜ղճ երեխաներ:

Իրավիճակը շտկելու, փոխելու համար ելքը մեկն է՝ ստեղծել այնպիսի պայմաններ, որ ամենաարժանավորները փորձեն, ամենախելոքները երազեն դառնալ ուսուցիչ: Այսօր, սակայն, Արցախում դեռ վաղ է խոսել այդ մասին: Ահա սա է, որ լրջորեն պետք է մտահոգի ոչ միայն ծրագրի հեղինակներին, այլև ողջ հասարակությանը:Պիտի խորհենք, մտածենք. ինչու՞ Անգլիայում, Ֆինլանդիայում, ուրիշ շատ երկրներում շրջանավարտներին ձգում, հրապուրում է ուսուցչի մասնագիտությունը, իսկ մեզ մոտ շատ ժամանակ ուսուցիչ դառնում են մի տեսակ հարկադրված, ճարահատյալ, հենց այնպես: Դիպլոմ ունենալու համար: Այսպես շարունակել չի կարելի: Ես այն մտքին եմ, որ այս յուրօրինակ լճացումից դուրս գալու ամենաարդյունավետ միջոցներից մեկը ուսուցչի աշխատավարձի բարձրացումն է: Ի՞նչ է ստանում այսօրվա ուսուցիչը. լավագույն դեպքում՝ 90-100 հազար դրամ: Խրոխտ է հնչում: Բայց մեկ է, չի հերիքում: Ու, չթաքցնենք, ոմանք(հիմնականում՝ տղամարդիկ) դպրոցը թողնում, գնում մի ուրիշ գործով են զբաղվում: Ավելի շահավետ, «հաց բերող» գործով: Բիզնես են անում, մի փոքր կրպակ բացում, որևէ բան առնում-ծախում: Ու, պատկերացրեք, ավելի շատ են վաստակում: Հիմա կասեք՝ բա պատի՞վը, արժանապատվությունը: Նեղն ընկած մարդը մոռանում է ամեն ինչ:

Ի դեպ, «անբուժելի այս ցավը» հնուց է գալիս: Տակավին անցյալ դարի 60-ական թվականներին Մեծն Լոռեցին, խոսելով ուսուցչի դժվարին կացության, նյութական ծանր պայմանների մասին, գրել է.

«Հայ ուսուցիչը խեղդված է նյութական նեղ վիճակի մեջ, չի կարողանում ապրել, չի կարողանում հանգիստ ու սրտալի կանգնել իր տեղը, իր կոչումի բարձրության վրա և հետզհետե չի կարողանում զարգանալ ու զորանալ թե՛ մտավորապես ու թե բարոյապես: Այո՛, փախչում է հայ ուսուցիչը հայոց դպրոցից: Եվ եթե մենք ուզում ենք ետ բերել նրան, լավացնել, զորացնել, բարձրացնել ու ամուր կանգնեցնել իր տեղը, իր պաշտոնի մեջ, պետք է նրա համար ստեղծենք մարդավայել պայմաններ: Դրա համար ամենից առաջ պետք է բարձրացնել նրա դասագինը, նրա ռոճիկը»:

Այս բառերը, որ ասվել են ավելի քան մեկուկես դար առաջ, այսօր էլ պահպանում են իրենց հնչեղությունը, իրենց թարմությունը, արդիականությունը: Ու, թվում է, ոչ ոք առարկել չի կարող: Ծրագրի հարգարժան հեղինակները, համակարգի պատասխանատուները՝ նույնպես: Այնպես որ՝ այս խնդիրը միշտ պիտի լինի պատկան մարմինների, դպրոցի մասին հոգացողների ուշադրության կենտրոնում: Թե չէ...ամենուր լսվող «պետք է կանգնած լինի մի այնպիսի բարձրության վրա», «սիրտն ու հոգին» ու էլի հաճելի նման շատ ու շատ արտահայտություններ կկորցնեն իրենց նշանակությունը:

Գոհունակությամբ նշենք, որ Ծրագրում շոշափվում է այս հարցը ևս: Ահա խոսուն մի քանի տող.«Բայց պետք է նկատի ունենալ, որ անհրաժեշտ է ուսուցչի գործը դարձնել հարմար, և նրան պետք է ընձեռել լավագույն հնարավորություններ՝ իր սպասավորությունը կատարելու համար: Այդ սպասավորին, հոգիների մշակին, իսկապես պետք է լավ նայենք: Նախ՝ տանք նրան այն բոլոր արդիական հնարավորությունները, որ այսօր կան աշխարհում՝ մեթոդոլոգիաներ, տեխնոլոգիաներ, դասագրքեր և այլն: Եվ անընդհատ թարմացնենք դրանք: Այսինքն՝ վստահ լինենք, որ հայ ուսուցիչն օգտվելու է բոլոր այն հնարավորություններից, որոնցից օգտվում են աշխարհի ուսուցիչները»:

Հիանալի է ասված: Այսպիսի պայմաններում հնարավոր կլինի ոչ միայն մանկան հոգին կրթել, այլև...սարեր շրջել: Միայն աղաչենք Տիրոջը, որ դրանք թղթի վրա չմնան:

Ի՞նչն է շատ ավելի ուրախալի: Այն, որ Ծրագիրը փաստորեն կոչ է գործող բոլոր ուսուցիչներին՝ վերապատրաստվելու և նախատեսված խնդիրների իրագործմանը մասնակցելու, մասնագիտական բարձունքների հասնելու:

Այն միտված է երիտասարդներին համոզելու, որ դառնան ուսուցիչ, զբաղվեն աճող սերնդի կրթությամբ, մասնակիցը դառնան երկրի համար պիտանի քաղաքացիներ պատրաստելու հույժ կարևոր գործին:

Սա, ինչ խոսք, դյուրին բան չէ: Բայց ում հայտնի չէ, որ առանց դժվարությունների անհնարին է հասնել ցանկալի արդյունքի: Դե, ուրեմն, հուսանք ու հավատանք, որ Ծրագիրը շատ բան է փոխելու ոչ միայն կրթական համակարգում, այլև մեր առօրյա կյանքում: Հավատանք, քանզի ամեն-ամեն լավ բան ծնվում է հավատից: Սևակի իմաստուն տողերը վերհիշենք.

Առանց հավատի հեշտ է մեռնելը,
Բայց ապրելն արդեն անկարելի է:

Ի՞նչ խորհուրդ կտայի, ի՞նչ կուզենայի:

Խորհուրդ կտայի (նաև՝ կառաջարկեի), որ մեր բոլոր ուսուցիչները Ծրագրում արծարծված հարցերին նայեին «բաց աչքերով», սթափ հայացքով: Հենց այնպես կարդալը դեռևս քիչ է: Ծրագիրը յուրօրինակ ուղեցույց պիտի լինի դպրոցի ամեն աշխատողի համար: Շատ կուզենայի, որ բոլորը (դասվարից մինչև տնօրեն) հանդես գային ոչ թե դիտողի, այլ անչափ կարևոր այդ «Թղթին» ուժ և կենդանություն, նորմալ շնչառություն տվողի դերում:

Անկեղծ եմ ասում. ես հավատում, երանի եմ տալիս այն ուսուցիչներին, աշակերտներին, ովքեր տարիներ հետո քայլելու, բարձրանալու են մեր երազած ազգային դպրոցի աստիճաններով ու հիանալու, հիացմունք են ապրելու բոլորովին նոր ձևով կահավորված դասասենյակներով, լաբորատոր հարուստ սարքավորումներով, թարգմանաբար լույս տեսած կոկիկ դասագրքերով, ոչ սովորական համակարգիչներով ու, վերջապես, պատմողի մաքուր, գրագետ, հյութեղ խոսքով: Նաև (մի զարմացեք) կրթական համակարգի հանդեպ իշխանավորների. ծնողների, դաստիարակների կողմից ցուցաբերվող սրտացավ վերաբերմունքով:

Վերջացնենք՝ ընդգծելով մի պարզ ճշմարտություն: Տարիներ շարունակ դպրոցը տարաբնույթ որոշումներ, ռեֆորմներ է տեսել և կորցրել ինքնուրույն դեմքը: Սխալներով, աղավաղումներով լեցուն, սուտ ու անհամ լոզունգային դասագրքեր, ոչ լիարժեք ծրագրեր, իրար հակասող հրահանգներ... Սա է եղել մեր ունեցած դպրոցը: Ու դեմ ենք առել պատին:

Փրկենք դպրոցը, ողջ կրթական համակարգը:

Հասկանալի է, հեշտ չի լինելու: Մեծ ճանապարհ ունենք անցնելու մինչ հասնենք իսկական ազգային դպրոցին: Ու թեև ուշացումով, բայց դարձի ենք եկել:

Դե, ուրեմն, սիրով, եռանդով նվիրվենք ազգային ոգու ու հայեցի դաստիարակության խնդիրների լուծմանը՝ խորապես հասկանալով, որ ազգային դպրոցը առաջին հերթին ազգային մտածելակերպ է ակնկալում, նոր ու արդարացված մոտեցում կրթության հանդեպ:

Միքայել ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ

ԴՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄԸ՝ ՀՈՒՍԱԴՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

1 ☜

Բայց և կիսեց ուսուցիչների անհանգստությունը՝ կապված մանկավարժական ծանրաբեռնվածության հետ. մայրաքաղաքի 2 ավագ, ֆիզմաթ դպրոցի, ռազմամարզական, պարարվեստի քոլեջների սնուցումը գալիս է հիմնական դպրոցներից, որտեղ եկող տարի սպասվում են ամենաքիչ թվով իններորդցիներ՝ 294 շրջանավարտ: Նրա կարծիքով՝ կոլեկտիվի անելիքները երեխաներին շահագրգռելու համար շատ են, որի միակ ճանապարհը բարձր արդյունքների ապահովումն է, երևան հանված թերությունների շտապփույթ վերացումը:

Իր նկատառումները ներկայացրեց նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը: Նա առաջնահերթ համարեց դպրոցում կարգապահության բարձրացումը.

«Մինչև այդ խնդիրը չլուծեք, այսինքն՝ կարգապահությունը չլինի պատշաճ մակարդակի վրա, դուք չեք կարողանալու կատարել ձեր մյուս պարտականությունները: Եվ այստեղ մեծ անելիքներ ունեն ինչպես դպրոցի տնօրինությունը, այնպես էլ դասղեկներն ու դասավանդող ուսուցիչները: Ինչպե՞ս կարելի է համակերպվել այն իրողությանը, որ ընդամենը 468 աշակերտ ունեցող դպրոցը օրական 85 բացակա ունենա, որի մեծ մասը անհարգելի է: Գլխավոր պահանջն այն է, որ յուրաքանչյուր աշակերտ դասին ներկա լինի: Սա յուրաքանչյուր դասղեկի, ուսուցչի, ղեկավարի պարտականությունն է: Մենք արդեն չենք խոսում դասապրոցեսն ինչպես կազմակերպելու, արդյունավետ աշխատելու մասին, քանի որ առաջին պայմանը դա է՝ աշակերտը դասին նստած լինի: Ծնողը երեխային առավոտյան ուղարկում է դպրոց, դպրոցը պարտավոր է աշակերտին ընդունել, մինչև դասերի ավարտը ապահով պահել և ճանապարհել տուն: Եթե դուք այս խնդիրը չեք կատարում, ուրեմն լուրջ անելիքներ ունեք: Սա մեկ պայման, որ դեռևս չեք կատարում: Ավագ դպրոց այն աշակերտներն են ընդունվում, որոնք գալիս են ուսում ստանալու: Եթե գալիս է ուսում ստանալու համար ու դասի չի հաճախում, նշանակում է այստեղ լուրջ խնդիրներ կան»,-շարունակեց նախարարը:

Նորից ընդգծվեց այն միտքը, որ մանկավարժների աշխատանքը պետք է գնահատվի դպրոցի ունեցած ցուցանիշներով, աշակերտների գիտելիքների մակարդակով, կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտով, լավ նախաձեռնություններով, միջոցառումներով: Դրանք նույնպես պետք է անդրադառնան ուսման որակի և առաջադիմության վրա: Բոլոր միջոցառումների նպատակը դա պետք է լինի՝ նպաստել առաջադիմությանը: Եթե չեն նպաստում, նշանակում է մանկավարժական կոլեկտիվը թերացումներ ունի, նկատեց նախարարը: Յուրաքանչյուր երեխա ունի ինչ-որ առանձնահատկություն, որով կարող է շահագրգռվել, և նրա այդ հատկությունը օգտագործելով՝ դեպի ուսում բերել: Նախարարը այստեղից էլ բխեցրեց իր մյուս հարցադրումը. ինչո՞ւ այս դպրոցի ընդունելությունը տարեցտարի նվազում է: Նա նշեց մի քանի հանգամանքներ, մասնավորապես, ընտանիքի մի սովորողի կողմից բացասական վերաբերմունքը տվյալ դպրոցի հանդեպ (սովորելու իր պահանջմունքները չբավարարելը, կարգապահությունը, ուսուցիչների կողմից աշակերտներին տեղի-անտեղի վիրավորելը և այլն), որն իր ազդեցությունն է թողնում ընտանիքի մյուս երեխաների՝ դպրոցի ընտրության հարցում: Նախարարը չհամաձայնեց ուսուցիչների այն պատճառաբանությանը, թե իրենք օբյեկտիվ են գնահատում, դրա համար էլ երեխաների արտահոսք կա դպրոցում: «Օբյեկտիվ գնահատականը ցածր գնահատել չի նշանակում: Ընդհակառակը, դա ստիպում է երեխային աշխատել, որ կարողանա իր գիտելիքներն ավելի հարստացնել»,-ասաց Ս. Ասրյանը՝ կոչ անելով մտածել այս ուղղությամբ և ընդգծելով, որ գալու է ժամանակ՝ ով արդյունք չտա, իր տեղը պետք է զիջի ուրիշին: Այդ առնչությամբ նա անդրադարձավ վերջերս հանրային քննարկման արժանացած Կրթության գերազանցության ազգային ծրագրին, որում պարզ նշվում է, որ ուսուցիչների ընտրություն է կատարվելու: Միայն այն ուսուցիչն է մտնելու դպրոց, ով բավարարում է այս պահանջները: Դա նշանակում է, որ գործող ուսուցիչները պետք է լրջորեն մտածեն իրենց և՛ մասնագիտական, և՛ մեթոդական, և՛ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու իրենց կարողությունների մասին: «Միայն այդ ճանապարհով կարող եք դառնալ օրինակելի դպրոց»,-շեշտեց նախարարը:

Ս. Ասրյանը խիստ արտահայտվեց դպրոցում կատարվող դասղեկական աշխատանքի մասին. դասղեկական 9 ժամից միայն 2-ում կային երեխաներ: «Սա ներելի՞ փաստ է: Ո՛չ»,-ասաց՝ նաև պարզաբանելով, որ դրա համար դասղեկը վարձատրվում է, դաստիարակության ընդհանուր հիմունքները այդ ժամին պիտի մատուցվեն: Դասղեկի ժամին նախատեսված են նաև ծրագրային թեմաներ, կլինեն քաղպաշտպանության դասեր, կանցկացվեն գեղագիտական դաստիարակության և այլ բնույթի միջոցառումներ: Նախարարը տնօրեն Լ. Գևորգյանի ուշադրությունը հրավիրեց այս ամենի վրա՝ ավելի լուրջ վերահսկողություն իրականացնելու համար:

Նախարարը չշրջանցեց նաև վերադասի կողմից իջեցված հրամանների ոչ պատշաճ կատարման փաստերը, մասնավորապես՝ գնահատման համակարգի, dasaran.am-ի հետ կապված: Վերջինս ապահովում է դպրոց-ծնող ակտիվ կապը: Դպրոցը, չնայած բարձրակարգ վերանորոգված չէ, բավարար պայմաններ ունի լավ աշխատելու համար: Ս. Ասրյանը բավարար չհամարեց համակարգչային կաբինետի օգտագործումը՝ ընդամենը 140 ժամ: Իհարկե, դա չի նշանակում, որ պետք է բոլոր դասերն անցկացնել համակարգչային կաբինետում, եթե դրանք լինելու են անարդյունավետ:«Այդ դասերը պետք է սկզբունքորեն տարբերվեն մյուսներից իրենց որակական աստիճանով, իսկ դրա համար պետք է ուսումնասիրել առաջավոր փորձը,- մատնանշեց նախարարը:

Ս. Ասրյանն անդրադարձավ նաև ուսուցիչների սոցիալական խնդիրներին՝ ասելով, որ մեր երկրի սուղ պայմաններից ելնելով՝ նման հարցերը արագ չեն լուծվում, բայց, իհարկե, այդպես չի մնա, աստիճանաբար ամեն ինչ իր տեղը կընկնի: Ուսուցչի նյութական ապահովության հարցը տարեցտարի կբարելավվի: Չնայած այդ լծակները հիմա էլ գոյություն ունեն, ինչպես, օրինակ, տարակարգը, բայց շատ քիչ ուսուցիչներ են տարակարգի համար դիմում նախարարություն: Անշուշտ, դրա համար առաջին նախապայմանը տեսչական ստուգումների ժամանակ ուսուցչին տրված գնահատականն է: Ուսուցչին խրախուսելու էլի միջոցներ կան՝ տարվա լավագույն ուսուցիչ, տնօրեն, օլիմպիադայում, տարբեր մրցույթներում հաղթած աշակերտի ուսուցչի խրախուսում և այլն: Այդով հանդերձ, մեր ուսուցիչների զգալի մասը նյութականին այնքան չի ուշադրություն դարձնում, որքան ուսուցչի՝ իր առաքելությանը, այս համոզման է նախարարը:

Կրթության և գիտության նախարարը, առաջադրելով այս հարցերը, հույս հայտնեց, որ նախորդ ստուգումից հետո արձանագրված դրական առաջընթացը կշարունակվի, արդյունքներն ավելի գոհացուցիչ կլինեն, և ըստ այդմ՝ հաջորդ հանդիպումը ավելի հուսադրող կլինի:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

«ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻՑ

Մարտունու հ.1 միջնակարգ հոսքային դպրոցում աշխատանքային եռուզեռ էր: Դպրոցը հյուրընկալել էր Ֆինլանդիայից ժամանած հեռուստալրագրողներին, ովքեր առաքելություն ունեին ֆինլանդացիներին և, ինչու չէ, աշխարհին մեկ անգամ ևս ներկայացնելու Արցախ աշխարհը, նրա ստեղծագործ ժողովրդին ու հերոսական սերնդին: Պատահական չէր, որ նրանք դպրոց եկան դիրքերից, որտեղ հարցազրույց ունեցան սահմանը աչալրջորեն պահող քաջարի հայորդիների հետ, համոզվեցին, որ մեր սահմանները վստահելի ձեռքերում են: Տրամաբանական է, որ ցանկություն ունեցան լինել նաև դպրոցում՝ պարզելու, թե ինչքանով են նրանք պատրաստ՝ դառնալու արժանի հետնորդները իրենց պապերի, հայրերի, մերօրյա հերոսների: Նաև պարզելու, թե ինչ շեշտադրումներ են կատարվում պատմության դասերին XII դասարաններում:

Դասի թեման էր «Արցախյան շարժումը»:

Դասն սկսվեց Փառքի սրահից՝ դպրոցի զոհված շրջանավարտների հիշատակին հարգանքի տուրք մատուցելով: Ծաղիկները դնելուց հետո Վալենտինա Գրիգորյանը արտասանեց.

-Ա՜խ, ի՜մ հայրենիք,
Դու՛ հազարամյա
Իմ ազգանունը…
Ես այնպես ապրել կարողանայի,
Որ ինձ ազգանունդ բաշխելու համար
Դու երբևիցե անհարմար չզգաս…

Սկսվեց դասը: Սկսեցի նրանից, որ գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը հնարավորություն տվեց կրկին բարձրացնելու դեռևս 1920-ական թվականներից ծխացող Արցախյան հարցը: Իսկ «Ի՞նչ էր եղել 1920թ.» հարցին, պատասխանեցին նախ՝ Արաքսյա Բաղդասարյանը, հետո՝ Նելլի Առստամյանը, ովքեր, մեկը մյուսին շարունակելով, պարզաբանեցին, թե ինչպես Արցախը բռնակցվեց Ադրբեջանին՝ առանց հայերի կամքը հարցնելու:

Արաքսյա Բաղդասարյան.- Լեռնային Ղարաբաղի խնդիրը իր հանգուցալուծումը ստացավ 1920թ. հուլիսի 4-ին կայացած նիստում, որին մասնակցում էր նաև Ստալինը: Կայացվում է միանգամայն արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ-ին միացնելու վերաբերյալ: Սակայն այդ որոշմանը դեմ է արտահայտվում Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Նարիմանովը: Հաջորդ օրը գումարվում է արտահերթ նիստ, որտեղ ՌԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է ԼՂ-ն հանձնել Ադրբեջանին:

Նելլի Առստամյան.- Ի տարբերություն Նարիմանովի՝ Ժողկոմխորհի նախագահ Մյասնիկյանը, ով նույնպես իրավունք ուներ բողոքելու այդ որոշման դեմ, հավանաբար գտնվելով կոշտ ճնշումների տակ, այդ քայլը չարեց: 1923թ. հուլիսի 7-ին ԼՂ-ին տրամադրվեց ինքնավար մարզի կարգավիճակ: Այսպիսով՝ այս որոշմամբ, առանց հայերի կամքը հարցնելու, 95% հայ բնակչություն ունեցող ԼՂԻՄ-ը բռնակցվեց Ադրբեջանին:

Ամբողջ դասը շարունակեցի պատմել որպես ականատես և մասնակից: Պատմեցի, թե ինչպես 1987թ. ստորագրահավաքից հետո 1988թ. հունվարի 5-ին Ղարաբաղից պատվիրակություն մեկնեց Մոսկվա՝ Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու պահանջով: Արցախ, որը պատմական Մեծ Հայքի 10-րդ նահանգն էր, Մեծ Հայք, որն ուներ 311 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Պատմեցի բազմահազարանոց ցույցերի մասին, թե ինչպես արցախահայերին սատար կանգնելու համար ցույցեր տեղի ունեցան և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում՝ նշելով, թե ինչպես պայքարը դարձավ համազգային, ու նորից ողջ հայությունը բռունցքվեց մեկ ընդհանուր նպատակի շուրջ: Ամբողջ դասի ընթացքում աշխատում էր համակարգիչը՝ ցուցադրելով համապատասխան դրվագները:

Շատ տեղին էր ***Հեղինե Շաքարյանի*** երգելու ցանկությունը («Հայե՛ր, միացեք»): Ընդհանուր ոգևորություն էր տիրում դասարանում: ***Հելեն Հայրումյանը***, ում պապը Մարտունու «Ամարաս» թերթի խմբագիրն էր, ասաց որ պապը պատմել է իրեն, թե ինչպես 1988-ին ներկա էր Գիշի գյուղի մի կոլտնտեսության ժողովի, ու բոլորովին անսպասելի՝ ժողովն ունեցավ այլ վերջաբան. այն ավարտվեց «մի-ա-ցում» վանկարկմամբ:

Այսպես շրջաններում շրջանային խորհուրդների որոշումներից հետո Ստեփանակերտում մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը ընդունեց պատմական որոշում, որն առանձնահատուկ հպարտությամբ մեզ ներկայացրեց Արտակ Ավանեսյանը. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի և ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

Այնուհետև պատմեցի պաշտոնական Մոսկվայի դիրքորոշման մասին, թե ինչպես Շարժումը որակվեց որպես «ծայրահեղական»: Իսկ «Ինչպիսի՞ն էր Ադրբեջանի դիրքորոշումը» հարցին պատասխանեցին երեխաները: ***Տիրուհի Դալլաքյանը*** պատմեց սումգայիթյան ողբերգության, դրա հետևանքների մասին: Ես էլ ավելացրի, որ ոճրագործությունը նախօրոք ծրագրվել էր, ու նրանք նախապատրաստվել էին՝ նախօրոք կտրելով հայերի հեռախոսալարերը, պատրաստել էին սրածայր ձողեր, որպեսզի դաժանորեն իրագործեն ոճիրը: Դասին ներկա էր նախկին սումգայիթաբնակ ***Սուսաննա Հովսեփյանը***, ով աշակերտներին ներկայացրեց մի քանի դրվագ՝ որպես ականատես: Տեղն էր շեշտելու, որ հայերը ոչ միայն չընկրկեցին Ադրբեջանի բիրտ ուժի քաղաքականությունից, այլև ավելի համախմբվեցին՝ գիտակցելով, որ կանգնած են իրենց պարտադրված պատերազմի շեմին: Անհրաժեշտ էր համախմբել եղած ռազմական ուժը, կազմակերպել ջոկատներ: Արաքսյա Բաղդասարյանը պատմեց մեզ իր պապի՝ Աբրիկ Հայրապետյանի մասին. «Երբ սկսվեց Արցախյան շարժումը, պապս՝ Աբրիկ Հայրապետյանը, 40 տարեկան էր, բայց թող անհամեստություն չթվա, երբ ասում եմ, որ նա մասնակցել է ր ազատագրական գրեթե բոլոր մարտերին: Քանի որ տիրապետում էր ադրբեջաներենին, նրան վստահվեց ռազմագերիների փոխանակման գործը: Եվ երբ հարցնում եմ նրան, թե ինչ տվեց նրան Արցախյան գոյամարտը, պատասխանում է, որ այն իմաստավորել է իր կյանքը, և իր կյանքի ամենահիմաստալից էջը եղել է այն մեկուկես տարին, որ անցկացրել է կենդանի լեգենդի՝ Մոնթե Մելքոնյանի հետ: Ոտից գլուխ ուշադրություն դարձած՝ լսում էի պատերազմի քուրայում թրծված պապիս խոսքերը:

Ես ուրախ եմ, որ խոսքեր ունեմ ասելու: Հպարտ եմ, որ նման մարդու թոռ եմ»:

Շարունակելով միտքս՝ ասացի, որ 1988թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց այն մասին, որ ԼՂԻՄ-ը Հայաստանի բաղկացուցիչ մասն է: Սակայն հուլիսի 18-ին Մոսկվան մեկ անգամ ևս ցույց տվեց իր հակահայկական դիրքորոշումը՝ բեկանելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 15-ի որոշումը:

Բաքուն դրան պատասխանեց նոր վայրագություններով: Իրավիճակը օրեցօր սրվում էր: Հայաթափվում էր Հյուսիսային Արցախը: Ադրբեջանական օմոն-ը, խորհրդային բանակի հետ համագործակցելով, իրականացրեց «Օղակ» օպերացիան: «Գիտե՞ք այդ մասին» հարցին պատասխանեցին աշակերտները.

Անուշ Հովսեփյան.- 1991թ. մարտի 25-ից ռմբակոծվում էր Գետաշենը: Վիճակն ավելի է ծանրանում, երբ ապրիլի 30-ին սկսվում է «Օղակ» օպերացիան: Գետաշենի հերոսական պայքարը գլխավորում էր Թաթուլ Կրպեյանը: Մարտում զոհվեցին Թ.Կրպեյանը, Արթուր Կարապետյանը, Սիմոն Ազիզուլյանը և ուրիշներ: Եղան զոհեր ու վիրավորներ:

Ավելացրի, որ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո՝ գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանի գլխավորությամբ: Պաշտպանության խորհուրդը գլխավորեց 33-ամյա պատմաբան Ա.Մկրտչյանը: Զինվորագրվում էր ողջ հայությունը: Մեծ էր Սփյուռքի ներդրումը այդ գործում: ***Գայանե Միրզոյանը*** ցանկություն հայտնեց արտահայտվել այդ մասին:

«Արցախյան ազատագրական պատերազմին անմասն չմնաց սփյուռքահայությունը: Նրանց օգնությունը դրսևորվեց ռազմական, տնտեսական և բարոյական բնագավառներում: Սփյուռքահայերից ոմանք ոչ միայն մասնակցեցին գործողություններին, այլև ծանրակշիռ ներդրում ունեցան զինվորական կադրերի պատրաստման, մարտական ջոկատների և ՊՇ-ի ձևավորման գործում:

Սփյուռքահայ քաջերից ոմանք զոհվեցին՝ Վ.Զաքարյան, Մ Զուլիաճյան, Մ.Մելքոնյան, Կ.Քահքեջյան և այլք:

Հատուկ հպարտությամբ նշում եմ Մոնթե Մելքոնյանի անունը, ով մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Նշեցի, որ իրադարձությունների զարգացումը բերեց նրան, որ 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունվեց հռչակագիր՝ ԼՂՀ-ի հռչակման մասին: Դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ հանրաքվե, քվեարկողների 99%-ից ավելին ձայն տվեց անկախության օգտին: Նարինե Արզումանյանը հուզված ու հպարտ ասաց. «Ես միշտ ուզում էի իմանալ, թե ինչպես է կազմավորվել ԼՂՀ-ն: Այսօր ստացա իմ հարցերի պատասխանները: Հպարտ եմ, որ հայ եմ, արցախցի եմ: Պատրաստ եմ ամեն գնով նպաստել Ղարաբաղի անկախության պահպանմանն ու Արցախի բարգավաճմանը»: Իսկ ***Մարիամ Բաբայանը*** ավելացրեց. «1991թ. սեպտեմբերին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ-ի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը: Ընդունվեց «Հռչակագիր ԼՂՀ-ի հռչակման մասին» որոշում: Նախկին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն:

Հպարտ եմ, ուրախ, որ ապրում եմ ազատ, անկախ Արցախում… Կրկնակի ուրախ եմ, որովհետև ծնվել եմ հենց այդ օրը»:

Պատմեցի, որ պատերազմը ավելի էր ծավալվում: Ռմբակոծվում էին շրջաններն ու գյուղերը, հատկապես Ստեփանակերտը և՛ Աղդամից, և՛ Շուշիից, և՛ Խոջալուից:

Քարինտակի հերոսամարտից հետո հաջորդը Խոջալուն էր: 1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Ա.Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ հայկական ջոկատները անակնկալի բերեցին թշնամուն, որը ստիպված նահանջեց: Հայերը միջանցք էին թողել, որպեսզի Խոջալուի բնակչությունը հեռանար Աղդամ: Տեղին էր շեշտել, որ Ադրբեջանի Ազգային ճակատը, որպեսզի իշխանությունը գրավի, այո՛, հենց ադրբեջանցիները իրենց ձեռքով կազմակերպեցին Խոջալուի բնակչության կոտորած՝ փորձելով մեղքը բարդել հայկական կողմի վրա:

Այսպիսին է հայը՝ գթասիրտ, մարդասեր, այդպիսին է ադրբեջանցին, որն իր իսկ նպատակի համար պատրաստ է կոտորել սեփական ժողովրդին: Իսկ հաջորդը Շուշին էր: Իրականացնելով «Հարսանիք լեռներում» օպերացիան՝ ազատագրվեց հայոց հինավուրց քաղաքը: Ընդհանուր հպարտություն և հիացմունք տեսա բոլորի հայացքներում, հատկապես Հայկ Դադայանի խոսքերից. «Շուշին պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկի՝ Արցախի հինավուրց բերդաքաղաքն է: «Շուշի» անվան խորհուրդը ծնվել է ոչ թե հեռավոր անցյալում, այլ մեր օրերում: Շուշիի անվան հետ է կապված հայ ժողովրդի պատմության ամենապանծալի էջերից մեկը՝ հայ ժողովրդի հաղթանակը Ղարաբաղյան ազատագրական պատերազմում: Եվ այսուհետ ամեն հայի համար «Շուշի» անվան առաջին և հիմնական իմաստը դարձել է մեկ բառ՝ ***հաղթանակ***»: Ավելացրի, որ Լաչինի ազատագրումով բացվեց մարդասիրական միջանցքը: Այսօր կառուցվում է 2-րդ այլընտրանքային ցամաքային Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը: Նշեցի, որ 1993թ. հաղթարշավի ժամանակաշրջան էր, որովհետև ազատագրվեցին Քարվաճառի շրջանը, Մարտակերտ քաղաքը: Այնուհետև թշնամին պարտություն կրեց Աղդամում, Ֆիզուլիում, Ջաբրայիլում և այլ վայրերում: Այդ հաղթանակներն ամբողջացրեց Օմարի լեռնանցքի ազատագրումը: Ամփոփելով միտքս՝ հպարտորեն ասացի, որ չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել Ղարաբաղյան հիմնահարցը՝ ադրբեջանական իշխանությունները Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994թ. մայիսի 12-ին հաստատեցին զինադադար: Սակայն այն խախտվում է ամեն օր, իսկ սույն թվականի օգոստոսին Արցախը կանգնեց նոր պատերազմի շեմին: Ադրբեջանի ռազմաշունչ կոչերից հետո սահմանային ընդհարումները դարձան սովորական: Ու ծնվեցին մերօրյա հերոսները, ովքեր ապացուցեցին թշնամուն, որ մեր սահմաններն անառիկ են ու անխոցելի:

Վալենտինա Գրիգորյանն ասաց.«Ես չեմ կարծում, որ կա որևէ հանգամանք, որը խանգարեր ինձ հայրենիք պաշտպանելու ցանկությունս իրագործելու համար: Քանզի մենք ենք վաղվա զինվորը: Երբեմն լսելով սահմաններում կատարվող դեպքերի մասին՝ մի զգացում է պատում, ցանկանում ենք թողնել թեկուզ ուսումը ու գնալ կանգնել մեր եղբայրների կողքին, կռվել հանուն հայրենիքի, հանուն ժողովրդի բարօրության:

Երևի հենց դա է հայրենասիրությունը, և հենց դրա շնորհիվ է, որ մինչև այսօր կանք և գոյատևում ենք»:

Մարատ Սարգսյան .- Երբ փոքր էի, չգիտեի, թե ինչ է հայրենիքը, հայրենասիրությունը, և զինվորի կերպարը ինձ համար անծանոթ էր: Առաջին զինվորը, որ աչք բացեցի, տեսա ու սիրեցի, հայրս էր: Հորս կերպարի շնորհիվ ես սկսեցի սիրել զինվորին: Ես երանի էի տալիս զինվորին, քանի որ նրա ձեռքերում է հայրենիքի պաշտպանությունը: Եվ քանի մեծանում, այնքան ավելի էր զինվոր դառնալու ձգտումս աճում: Սիրում էի զինվորին, զինվոր դարձնող ամեն ինչ՝ զինվորական հագուստ, կոշիկներ, զենք…

Արդեն մեծ եմ, հասկանում եմ զինվորի և՛ գործը, և՛ պարտքը, և՛ պատիվը:

Շնորհակալ եմ հորս, որ նրա շնորհիվ ճանաչեցի և սիրեցի զինվորին: Այլևս չեմ զարմանում, թե ինչպես է հայրս երկու տասնամյակից ավելի շարունակում մնալ զինվոր: Այսօր նա սպա է, փոխգնդապետ, բայց շարունակում է մնալ զինվոր: Շուտով ես էլ կդառնամ հայրենիքիս զինվորը և կշարունակեմ հայ զինվորների գործը:

Ամբողջացնելով դասը, ամփոփելով միտքս՝ ասացի, որ այսօր «դե ֆակտո» անկախ է ԼՂՀ-ն: Այն ունի պետական բոլոր խորհրդանիշները՝ օրհներգը, դրոշը, զինանշանը: Ունի իր Սահմանադրությունը:

Սկսված է Արցախի «դե յուրե» ճանաչման գործընթացը: Այս գործում ևս մեծ է Սփյուռքի, ընդհանրապես ողջ հայության ներդրումը:

Վերջում ***Պարույրը*** ցանկություն հայտնեց արտահայտել իր հոգու խորքում ողջ կուտակվածը.

«Հպարտ եմ, որ մեր պապերի ու հայրերի կերտած հայրենիքն այսօր անկախ է ու ազատ: Ես և իմ սերունդը պատրաստ ենք շենացնել այն մեր կրթությամբ, աշխատանքով, ու եթե պետք լինի, նաև՝ մեր ռազմական ներուժով:

Ես քո կենդանի սուրն եմ, հայրենի՛ք, և կդառնամ կենդանի վահան՝ քո պաշտպանության համար»:

Դասն ավարտեցինք՝ երգելով Արցախի օրհներգը:

Լարիսա ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՂԱՋԱՐՅԱՆ)
Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի ուսուցչուհի

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Հեքիաթը գրականության ամենաբարձր արտահայտությունն է:

Հովհ. Թումանյան

Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացումը անհատի ձևավորման, մարդկային փորձի փոխանակման, գիտելիքների հաղորդման և յուրացման կարևորագույն տարրերից է, որը սերտորեն կապված է մտավոր, բարոյական, գեղագիտական դաստիարակության հետ: Նախադպրոցականների խոսքի զարգացումը իրականացվում է ոտանավորների ուսուցմամբ, պատմումներով, վերապատմումներով, գեղարվեստական գրականության ընթերցանությամբ, դիդակտիկ խաղերով, զրույցներով:

Առանձնապես կարևոր եմ համարում հեքիաթների ընթերցանությունը, որը կարելի է արդյունավետ դարձնել՝ կիրառելով ուղղորդող և ամրապնդող հարցադրումներ:

Նախադպրոցականների խոսքի զարգացմանը նպաստում են նաև թեմատիկ պարապմունքների կազմակերպումը հեքիաթների թեմաներով:

Նման պարապմունքի նպատակն է ամրապնդել երեխաների գիտելիքները հեքիաթների մասին, բացահայտել հեքիաթների դրական և բացասական կողմերը, հերոսների ներաշխարհը, հեքիաթների բարոյախրատական իմաստը: Պարապմունքներում ընդգրկվում են խաղեր, բեմադրություններ, ասույթներ, երգեր, պարբերաբար ֆիզկուլտդադարներ և մի շարք այլ հնարներ: Այն կնպաստի երեխաների ինչպես բանավոր խոսքի, այնպես էլ թատերական և ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացմանը: Նման պարապմունքները թույլ կտան, որ բոլոր երեխաները ներգրավվեն գործընթացին: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է նաև դիդակտիկ պարագաների օգտագործումը, որոնց պատրաստմանը կարող են մասնակցել նաև երեխաները:

Երեխաների վերոհիշյալ հմտությունները զարգացնելու համար կարելի է պարապմունք կազմակերպել Հ. Թումանյանի հեքիաթներից:

Անհրաժեշտ դիդակտիկ պարագաներն են Հ. Թումանյանի լուսանկարը, հեքիաթային դրվագներ պատկերող նկարներ, «հեքիաթային գրադարանը», բեմադրվող հեքիաթի կահավորումը, որը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանին համապատասխանող կոլորիտը: Պարապմունքն անց է կացվում հարց ու պատասխանի միջոցով:

Նպատակահարմար է սկսել ողջույնի խոսքով:

Երեխաներ (հերթով միացնելով ձեռքերի մատները).-

Բարև, կարմիր արև,
Բարև, կապույտ երկինք,
Բարև, կանաչ տերև,
Բարև, կարմիր ծաղիկ,
Բարև, քնքուշ քամի,
Բարև բոլորին,
Ովքեր ապրում են մեր կողքին:

Դաստիարակ. - Երեխանե՛ր, ո՞րն է մեր այսօրվա պարապմունքի թեման:

Երեխաներ.- Թումանյանի հեքիաթները:

Դաստիարակ.- Իսկ ո՞վ է Հ. Թումանյանը:

Երեխա- Հայ մեծագույն գրող ու բանաստեղծ է:

Նա ծնվել է 1869թ. փետրվարի 19-ին Լոռվա Դսեղ գյուղում:

Դաստիարակ.- Ի՞նչ են մեզ սովորեցնում հեքիաթները:

Երեխա.- Հեքիաթները խելոք են միշտ,
Թեկուզ խառն են և՛ սուտ, և՛ ճիշտ,
Սուտը խելքի մաղով մաղենք,
Ճշտից խրատ ու խելք քաղենք:

Հեքիաթներում միշտ բարին հաղթում է չարին:

Դաստիարակ.- Ինչպե՞ս ենք սկսում հեքիաթները:

Երեխա. - Լինում է, չի լինում: Կար, չկար: Ժուկով- ժամանակով:

Այնուհետև երեխաները սկսում են թվարկել Հ. Թումանյանի հեքիաթները («Ուլիկը», «Չարի վերջը», «Անխելք մարդը», «Ծիտը», «Քաջ Նազարը», «Բարեկենդանը»,«Կիկոսի մահը» և այլն):

Մատնանշված հեքիաթներից իրենց ամենից շատ դուր եկածը երեխաները հակիրճ ներկայացնում են՝ բաժանվելով դերերի:

Օրինակ՝ վերցնենք «Չարի վերջը» հեքիաթը, որի վերջաբանը կարելի է ամփոփ ձևով ներկայացնել ծավալուն լինելու պատճառով:

Հեղինակ.- Եվ աղվեսը ագռավի վրա բարկացած գնում է նրան փնտրելու: Իսկ ագռավը ծուղակի մեջ է գցում աղվեսին ու կործանում նրան: Այդպես է լինում չարի վերջը:

Խաղ՝ «Գուշակիր՝ որ հեքիաթից է»

Լսելով որևէ հեքիաթից տողեր՝ երեխաները պետք է գուշակեն հեքիաթի վերնագիրը և շարունակեն՝ արտասանելով հեքիաթից փոքրիկ չափածո հատվածներ:

Դաստիարակ. -«Խոր անտառում մի այծ է լինում»:

Երեխա. - «Ուլիկը». - Սևուկ ուլիկ, սիրուն բալիկ...

Դաստիարակ.-«Ճանկել է մի գառան մորթի»:

Երեխա.-«Շունն ու կատուն», «Ժամանակով կատուն ճոն էր...»:

Դաստիարակ .- «Առ էս փուշը թոնիրդ վառի, լավաշ թխի»:

Երեխա.-«Ծիտը».- «Փուշիկ տվի լոշիկ առա...»:

Դաստիարակ. - «Խոսքին տալով էս ձևը»:

Երեխա. - «Գայլն ու գառը»:

-Մի ամլիկ գառ իրեն համար...

Դաստիարակ. - «Ծառի տակին նստում է ու սկսում է սուգ անել»:

Երեխա .- «Կիկոսի մահը»:

-Գնացի մարդի, ունեցա որդի...

Դաստիարակ. -«Լինում է, չի լինում մի ծույլ ու անշնորհք աղջիկ է լինում»:

Երեխա. - «Անբան Հուռին»:

- Բանն ինչ անեմ, կեղտոտ է, բամբակը կրիզոտ է...

Դաստիարակ. - «Այ կնիկ ինչ քարվան կտրելու գիշեր է: Սիրտս ասում է ՝ վեր կաց գնա Հնդկաստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունդ լցրու»:

Երեխա .-«Քաջ Նազարը»:

-Անհաղթ հերոս, քաջ Նազար, որ մին զարկի, ջարդի հազար:

Հերթական խաղ՝ «Նկարներով գուշակենք հեքիաթները»:

Երեխաները, դիտելով նկարները, գուշակում են հեքիաթները: Խաղից հետո կարելի է որևէ հեքիաթ բեմադրել, քանի որ երեխաները սիրում են ինչպես դիտել, այնպես էլ խաղալ ներկայացումներ: Օրինակ՝ բեմադրեցինք «Բարեկենդանը» հեքիաթը: Ներկայացման ավարտից հետո հնչում են հետևյալ տողերը.

Երեխա. - Երկնքից ընկավ երեք խնձոր. մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ «Բարեկենդանին»:

Այնուհետև մի շարք հարցադրումների օգնությամբ դաստիարակը երեխաների հետ միասին վերլուծում է հեքիաթը. քանի՞ գործող անձ կար հեքիաթում, ինչպե՞ս վարվեց «Բարեկենդանը», նկարագրեք հերոսներին, ո՞ր պահն է ձեզ ամենից շատ դուր եկել, և նմանատիպ այլ հարցեր:

Իսկ վերջում՝ մի փոքրիկ պատմական էքսկուրս հեքիաթի շուրջը:

Դաստիարակ.- Իսկ արդյո՞ք «Բարեկենդանը» մարդ է:

Երեխա. - Ո՛չ, «Բարեկենդանը» տոն օր է, որի ժամանակ համով ուտելիքներ են պատրաստում, ուրախանում և խաղեր խաղում:

Դաստիարակ. - «Բարեկենդանը» բառացի նշանակում է կենդանություն, բարի կյանք, ուրախություն: Տոնը կապ է ունեցել գարնան սկսվելու հետ:

Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությունը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդը ունեին: Հին ժամանակներում այդ տոնը շատ ճոխ ու գեղեցիկ նշում էին Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ Պասն ընկած ժամանակահատվածը

Իսկ բուն Բարեկենդանը Մեծ Պասին նախորդող կիրակին է: Տոնի ժամանակ մարդիկ միմյանց մաղթում են բարի կենդանություն: Տոնական ուտեստների մեջ նախապատվելի են առատ մսով, յուղով, կաթնեղենով ուտելիքներ, գաթան և հալվան: Վերջին օրը՝ երեկոյան, կաթնապուր և մածուն էին ուտում, վրայից՝ խաշած ձու: Բարեկենդանը խրախճանքի ու զվարճանքի տոն էր:

Պարապմունքը կարելի է ավարտել գեղեցիկ հեքիաթային երգով:

Հարգելի՛ դաստիարակներ, հաճախակի ձեր սաներին կարդացեք հեքիաթներ, քանի որ հեքիաթը կրթում է, հեքիաթը զարգացնում է, հեքիաթը դաստիարակում է և բուժում է (հեքիաթաթերապիա):

Սերունդները անցնում են, գնում,
Իսկ հեքիաթները ծնվում են, մնում:

Դիանա ԱՂԱԼՅԱՆ
ՀՀ ԿԳՆ ԼՂՀ մասնաճյուղի հոգեբանության մասնագետ, հ. 9 հիմն. դպրոցի դաստիարակ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԻՆ

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն և պատրաստվածության աստիճան է պահանջում: Փոխվել են ժամանակակից դասին ներկայացվող պահանջները: Այսօր ուսուցչից պահանջվում է դասը վարել նոր մեթոդներով, նոր ոճով, երբ աշակերտը պասիվ ընկալողի դերում չէ, այլ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից: Ուսուցչի խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ:

Պետք է երեխային սովորեցնել սովորել. սա է հիմնական պահանջը, որը դրված է ժամանակակից ուսուցչի առաջ:

Օրերս Ստեփանակերտի h.6 հիմնական դպրոցի 3-րդ «բ» դասարանում կայացած բաց դասը « Մաթեմատիկա» առարկայից էր: Դասը վարում էր երիտասարդ դասվար Լիլիթ Ավանեսյանը:

Գեղեցիկ ու յուրօրինակ էր դասի սկիզբը. ուսուցչուհին դիմեց աշակերտներին հետևյալ խոսքերով.

Հնչեց զանգը, կամաց նստե՛ք,
Իրար նայե՛ք, ժպտացե՛ք,
Իսկ հիմա սիրով աշխատանքի անցե՛ք:

Մեծագույն ուրախություն է աշխատանքը դաշտերում, գործարաններում, սեղանների շուրջ:

Եթե պետք է, քրտինք թափեցե՛ք, աշխատե՛ք՝ առանց ավելորդ հաշվենկատության, որովհետև մեծագույն երջանկություն է աշխատանքը: Ուրեմն եղե՛ք աշխատասեր, գործասեր և ժրաջան՝ ինչպես մեղուները:

Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները՝ ուսուցչի աշխատանքը հստակ մշակված էր և չափավորված: Բավարար էր դասին նախապատրաստական աշխատանքը. այն կահավորված էր համակարգչով, պրոյեկտորով, քարտերով, աշխատանքային տետրերով, դասագրքերով: Հանգամանորեն մտածված էր դասի յուրաքանչյուր քայլն ու փուլը: Նրան հաջողվեց դասին ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի: Դասն իր պարզությամբ, գեղեցկությամբ և տեսանելիության շնորհիվ առավել մեծ տպավորություն թողեց սովորողների վրա:

Դասի սկզբից կիրառված «մտավոր գրոհի» մեթոդը վերաբերում էր անցած թեմաների կրկնությանը: Աշակերտները կարողացան անվանել բազմապատկման գործողության բաղադրիչները, նշել ամենափոքր երկնիշ ու եռանիշ թվերը, համառոտագրել խնդիրը և ինքնուրույն լուծել:

Նոր նյութի հաղորդումը ուղեկցվում էր պրոյեկտորի օգնությամբ սլայդների ցուցադրումով, որը ուսուցչուհին ինքն էր պատրաստել: Դասվար Լ. Ավանեսյանի դասը հագեցած էր աշխուժացնող վարժություններով, տարբեր դիդակտիկ խաղերով: Ուսուցչուհու խոսքը տրամադրող էր, բացատրությունների ծավալը կարճ էր, կոնկրետ և ըմբռնելի: Կազմակերպված երաժշտական ֆիզկուլտդադարը մեծ աշխուժություն առաջացրեց երեխաների մոտ: Ուսուցչուհին, համադրելով ուսուցման ժամանակակից մեթոդները ավանդականի հետ, կարողացավ հասնել դասի բարձր արդյունավետության, որի ակնհայտ ապացույցը աշակերտների բարձր ակտիվությունն էր դասի բոլոր փուլերում: Հետաքրքիր էր մտածված նաև դասի ավարտը. Կախարդական լուսացույցի գույները խորհրդանշող շրջանակները, որոնք դրված էին աշակերտների նստարաններին, պետք է ցուցադրեին նյութի նրանց յուրացման աստիճանը: Դասի վերջում բոլորի բարձրացրած կանաչ գույնը ազդարարեց յուրացման բարձր աստիճանի մասին:

Պետք է հաշվի առնել, որ կրտսեր դպրոցականների մոտ առավել զարգացած է կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ, երբ սովորողի մոտ դրական հույզեր է առաջացնում: Հենց այդ հանգամանքն էլ հաշվի էր առել ուսուցչուհին: Նրա դասը հետաքրքիր էր, ուսանելի և ընդօրինակման արժանի: Ուսուցչուհին կարողացավ իրականացնել հետապնդած մեթոդական նպատակը:

Սուսաննա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ստեփանակերտի հ. 6 հիմն. դպրոցի փոխտնօրեն

ԱՆԺԿԱԺՎԵԺ ՇՐՋԱՆԻ ԴՊՐՈԺԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ

Մարտունու h.1 հոսքային միջնակարգ դպրոցում անցկացվեց դպրոցականների շախմատի օլիմպիադայի շրջանային փուլը, որին մասնակցում էին շրջանի 17 դպրոցների 51 պատանի շախմատիստներ:

Մրցաշարը նախաձեռնեց և իրականացրեց Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժինը: Այն անցկացվեց շվեյցարական մրցակարգով. միջնակարգ դպրոցների միջև՝ 6 մրցափուլով, հիմնական դպրոցների միջև՝ 4:

Յուրաքանչյուր թիմ ուներ 3 մասնակից, որից առնվազը 1-ը՝ աղջիկ: Թիմային հաշվարկում գումարվեցին յուրաքանչյուր դպրոցը ներկայացնող 3 մասնակիցների անհատական արդյունքները և որոշվեցին 2 հաղթող թիմերը՝ 1 հիմնական դպրոց և 1 միջնակարգ (ավագ) դպրոց, որոնք և իրավունք ստացան մասնակցելու հաջորդ՝ հանրապետական փուլին:

Մրցափուլերն անցկացվեցին արագ շախմատի կանոններով՝ յուրաքանչյուրին տրամադրելով 15 րոպե ժամանակ: Թիմային հաշվարկից բացի սահմանվեց անհատական հաշվարկ տղաների և աղջիկների շրջանում:

Թիմային առաջնությունում մրցանակային տեղեր զբաղեցրին միջնակարգ դպրոցներից՝ համապատասխանաբար՝ Բերդաշենի, Մարտունու h.1, Թաղավարդի շախմատիստները և պարգևատրվեցին Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի պատվոգրերով, 1-ին տեղ գրաված Բերդաշենի թիմն արժանացավ նաև դրամական խրախուսանքի: Հիմնական դպրոցներից՝ համապատասխանաբար՝ Ղ. Ճարտարի, Թաղավարդ-Կալերի, Ծովատեղի դպրոցների շախմատիստները, ովքեր խրախուսվեցին դրամական պարգևով:

Տղաների անհատական առաջնությունում հաղթող ճանաչվեց Բերդաշենի թիմի անդամ Վահագն Բաբայանը, աղջիկների անհատական առաջնությունում՝ Մարտունու թիմի անդամ, h.1 հոսքային միջնակարգ դպրոցի աշակերտուհի Աննա Պետրոսյանը, ովքեր պարգևատրվեցին Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի պատվոգրով:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՐԱՄԵՏՐՈՎ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼԻՍ

Պարամետր պարունակող հավասարումները և անհավասարումները կարևոր դեր են խաղում սովորողների տրամաբանական մտածողության, ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում:

Պարամետրով խնդիրները բազմատիպ են: Դրանց լուծման ընդհանուր մեթոդ գոյություն չունի՝ բացառությամբ գծային և քառակուսային հավասարումների, անհավասարումների և համակարգերի: Հիմնականում բոլոր պարամետրով խնդիրները բաժանվում են երկու խմբի.

- խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել պարամետրի այն բոլոր արժեքները, որոնց դեպքում տեղի ունի որոշակի պայման.
- խնդիրներ, որոնցում պահանջվում է լուծել պարամետրով հավասարումը կամ անհավասարումը: Ընդ որում՝ երկրորդ խմբում պահանջվում է հստակեցնել պարամետրի այն արժեքները, որոնց դեպքում խնդիրը լուծում ունի և ցույց տալ այն:

Ստորև բերվում են մի քանի պարամետր պարունակող հավասարումների լուծումներ՝ օգտագործելով ֆունկցիայի հատկությունները, այդ թվում՝ ածանցյալը, որոնք վերցված են 12-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական հոսքի «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր»դասագրքից, ընդ որում՝ 232բ, 868 խնդիրների լուծման պատասխանները գրքում սխալ են գրված:

*200. a պարամետրի ի՞նչ արժեքի դեպքում x|x-2a|+1=a հավասարումն ունի՝ ա) մեկ արմատ,

բ) երկու արմատ, գ) երեք արմատ:

Լուծում:

$$x|x-2a|+1=a \Longleftrightarrow \left[\begin{array}{l}\begin{cases}x(x-2a)+1=a\\ x\ge 2a\end{cases}\\ \begin{cases}x(2a-x)+1=a\\ x<2a\end{cases}\end{array}\right. \Longleftrightarrow \left[\begin{array}{l}(A)\ \begin{cases}a(1+2x)=x^2+1\\ x\ge 2a\end{cases}\\ (B)\ \begin{cases}a(2x-1)=x^2-1\\ x<2a\end{cases}\end{array}\right.$$

Եթե a=0, ապա (A)-ն լուծում չունի: Դիցուք $a\neq 0$, այդ դեպքում՝

$$(A) \Longleftrightarrow \begin{cases}(1)\quad a=\dfrac{x^2+1}{2x+1}\\ \dfrac{x}{2}\ge a\end{cases}$$

$$(1) \Longleftrightarrow a=\frac{x}{2}-\frac{1}{4}+\frac{5}{4}\bullet\frac{1}{2x+1}$$

(A)-ն լուծում ունի, երբ $-\frac{1}{4}+\frac{5}{4}\bullet\frac{1}{2x+1}\le 0$, որը համարժեք է

$\frac{2-x}{2x+1}\le 0 \Longleftrightarrow x\in(-\infty;\ -0,5)\cup[2;+\infty)=C$

Հետազոտենք f(x)=0.5x-0.25+$\frac{1.25}{2x+1}$ ֆունկցիան C բազմությունում: $f'(x)=0,5-\frac{2.5}{(2x+1)^2}$:

$$f'(x)=0 \Longleftrightarrow x=-\frac{1\pm\sqrt{5}}{2} \Rightarrow x_0=-\frac{1+\sqrt{5}}{2}\in C$$

$(-\infty, x_0)$ միջակայքում f(x) աճում է, իսկ $(x_0;-0,5)$ միջակայքում՝ նվազում, ուստի $(-\infty;-0,5)$միջակայքի x_0 կետում ունի մաքսիմում: Բացի այդ, $\lim_{x\to-\infty}f(x)=-\infty$;$\lim_{x\to-0,5}f(x)=-\infty$: $f(x_0)$=$-\frac{1+\sqrt{5}}{2}$:

Այսպիսով ստացանք, որ $x\in(-\infty;x_0)\cup(x_0;\ -0,5) \Rightarrow f(x)\subset\left(-\infty;\ -\frac{1+\sqrt{5}}{2}\right)$, ընդ որում՝ այդ միջակայքի յուրաքանչյուր արժեք ընդունում է երկու անգամ: $(2;\infty)$-ում $f'(x)\ge 0$, ուստի այդ միջակայքում f(x)-ը աճող է: f(2)=1 և $\lim_{x\to\infty}f(x)=\infty$: Հետևաբար՝ $[2,\infty)$ միջակայքում f(x)-ի արժեքների բազմությունը $[1,\infty)$ միջակայքն է:

Ստացած արդյունքները գրենք աղյուսակի տեսքով (աղյուսակ 1): Աղյուսակից երևում է, որ եթե $a\in\left(-\infty;-\frac{1+\sqrt{5}}{2}\right)$, ապա f(x)=a հավասարումն ունի երկու արմատ և հետևաբար (A) համակարգը՝ երկու լուծում, եթե $a\in[2;+\infty)\cup\left\{-\frac{1+\sqrt{5}}{2}\right\}$ հավասարումն ունի մեկ արմատ, (A) համակարգը՝ մեկ լուծում:

x	$\left(-\infty;-\frac{1+\sqrt{5}}{2}\right)$	$-\frac{1+\sqrt{5}}{2}$	$\left(-\frac{1+\sqrt{5}}{2};-0,5\right)$	2	$(2;+\infty)$
f'(x)	+	0	-		+
f(x)	$\left(-\infty;-\frac{1+\sqrt{5}}{2}\right)$	$-\frac{1+\sqrt{5}}{2}$ max	$\left(-\infty;-\frac{1+\sqrt{5}}{2}\right)$	1	$(1;\infty)$

Աղյուսակ 1.

Գտնենք (B) համակարգի լուծումների քանակը a-ից կախված:

$$(B) \Longleftrightarrow \begin{cases}(2)\quad a=\dfrac{x^2-1}{2x-1}\\ x<2a\end{cases}$$

$(2) \Longleftrightarrow a=0,5x+0,25-\frac{0,75}{2x-1}$; (B)-ն ունի լուծում, երբ $0,25-\frac{0,75}{2x-1}>0$, որը համարժեք է $x\in(-\infty;0,5)\cup(2;\infty)$=D:

Դիտարկենք D որոշման տիրույթով $g(x)=0,5x+0,25-\frac{0.75}{2x-1}$ ֆունկցիան:

g'(x)=0,5+$\frac{1.5}{(2x-1)^2}$, ուստի D-ում g(x) ունի դրական ածանցյալ, հետևաբար՝ $(-\infty;0,5)$ և $(2;\infty)$ միջակայքերից յուրաքանչյուրում աճող է: Երբ $x\to+\infty$ ֆունկցիայի արժեքները ձգտում են $+\infty$, $\lim_{x\to-\infty}g(x)=-\infty$, $\lim_{x\to0,5}g(x)=+\infty$, $\lim_{x\to2}g(x)=1$:

Այսպիսով՝ $x\in(-\infty;0,5)$ հետևում է, որ $g(x)$-ի արժեքների բազմությունը $(-\infty;+\infty)$ է, իսկ $x\in(2;\infty)$ դեպքում՝ $(1;+\infty)$-ը: Հետևաբար՝ $g(x)$=a հավասարումն ունի մեկ արմատ, երբ $a\in(-\infty;1]$ և երկու արմատ, եթե $a\in(1;+\infty)$:

Շարադրանքից հետևում է, որ (B) համակարգն ունի մեկ լուծում, երբ $a\in(-\infty;1]$ և երկու լուծում, երբ $a\in(1;+\infty)$:

(A)և(B) համակարգերը անհամատեղելի են, հետևաբար միավորելով դրանց լուծումները՝ կարող ենք ասել, որ x|x-2a|+1=a հավասարումն ունի՝

ա) մեկ արմատ, եթե $a\in\left(-\frac{1+\sqrt{5}}{2};1\right)$

բ) երկու արմատ, երբ $a=-\frac{1+\sqrt{5}}{2}$, a = 1

գ) երեք արմատ, երբ $a\in\left(-\infty;-\frac{1+\sqrt{5}}{2}\right)\cup(1;+\infty)$:

Հավասարումը կարելի է լուծել կոորդինատների մեթոդով, եթե աշակերտները հեշտությամբ են պատկերում կետերի երկրաչափական տեղը կոորդինատային հարթության վրա:

*868. Գտնել $\sqrt{a-\sqrt{a+x}}$=x արմատների քանակը՝ կախված a պարամետրից:

Լուծում. Եթե a=0, ապա $\sqrt{-\sqrt{x}}=x \Longleftrightarrow x=0$, այսինքն՝ հավասարումն ունի մեկ արմատ:

Դիցուք $a\neq 0$: Հավասարումը եթե ունի արմատ, ապա այն բավարարում է

$\begin{cases}a-\sqrt{a+x}\ge 0\\ x\ge 0\end{cases} \Longleftrightarrow \begin{cases}x\le a^2-a\\ a>0\\ x\ge 0\end{cases} \Longleftrightarrow \begin{cases}0\le x\le a^2-a\\ a\ge 1\end{cases}$ պայմաններին:

Դիտարկենք $f(x)=\sqrt{a-\sqrt{a+x}}-x$ ֆունկցիան $[0;a^2-a]$ որոշման տիրույթով, որտեղ $a\ge 1$:

Գտնենք $f(x)$-ի ածանցյալը:

$$f'(x)=\frac{1}{2\sqrt{a-\sqrt{a+x}}}\left(-\frac{1}{2\sqrt{a+x}}\right)-1$$

Վերջինս D(f)-ում բացասական է, ուստի $f(x)$-ը նվազող է: f(0)=$\sqrt{a-\sqrt{a}}>0$:

$f(a^2-a)=a-a^2<0$; Ստացանք, որ $f(x)$-ը $[0;a^2-a]$ միջակայքում նվազող, անընդհատ (տարրական է) ֆունկցիա է և միջակայքի ծայրակետերում ընդունում է տարբեր նշանի արժեքներ, ուրեմն՝ միջակայքի միակ ներքին կետում արժեքը հավասար զրոյի: Ուստի $\sqrt{a-\sqrt{a+x}}$=x հավասարումը $a\ge 1$ դեպքում ունի մեկ արմատ: Քանի որ հավասարման արմատները և $f(x)$-ի զրոները համընկնում են $a\neq 0$ դեպքում, ուրեմն՝

հավասարումն ունի մեկ արմատ, երբ $a\notin\{0\}\cup[1;\infty)$, արմատ չունի, երբ $a\in(-\infty;0)\cup(0;1)$:

*232բ) Գտնել պարամետրի այն արժեքները, որոնց դեպքում անհավասարման լուծումն ամբողջ թվային առանցքն է.

$$a9^{|x|}-2(a-1)3^{|x|}+3a-1\ge 0$$

Լուծում: Քանի որ $3^{|x|}\ge 1$, բավական է գտնել a-ի այն արժեքները, որոնց դեպքում

$at^2-2(a-1)t+3a+1\ge 0$ անհավասարությանը բավարարում են t-ի մեկից ոչ փոքր բոլոր արժեքները:

$at^2-2(a-1)t+3a+1\ge 0 \Longleftrightarrow a(t^2-2t+3)\ge 1-2t \Longleftrightarrow a\ge\frac{1-2t}{t^2-2t+3}$, որովհետև $t^2-2t+3>0$:

Դիտարկենք $f(t)=\frac{1-2t}{t^2-2t+3}$ ֆունկցիան: $f'(t)=\frac{2(t^2-t-2)}{(t^2-2t+3)^2}$, որից հետևում է որ -1 և 2 կետերը կրիտիկական կետեր են: [-1;2] միջակայքում ֆունկցիան նվազում է, իսկ $[2,\infty)$-ում՝ աճում: Ուստի $[1;\infty)$)միջակայքում $f(t)$-ի փոքրագույն արժեքը հավասար է $f(2)$=-1, երբ $t\to\infty$, $f(t)\to 0$:

Այսպիսով՝ $[1;\infty)$ միջակայքում ֆունկցիայի արժեքների բազմությունը [-1;0) միջակայքն է:

Հետևաբար, եթե $a\ge 0$, ապա $a\ge f(t)$ անհավասարությունը ճիշտ է $[1;\infty)$ միջակայքի բոլոր t-երի համար և հետևաբար՝ տրված անհավասարման լուծումներն ամբողջ թվային առանցքն են : Պատ. $[0;\infty)$

Ռոմա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփ. հ.8 ավագ դպրոց

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Մարդկությունը դեռ շատ վաղուց է համոզվել, որ մարդու օրգանիզմի կոփման, ֆիզիկական զարգացման լավագույն միջոցները ֆիզկուլտուրան և սպորտն են, որոնք, յուրաքանչյուրին մատչելի լինելով հանդերձ, իրենցից ներկայացնում են պարզ ու որոշակի պահանջների կատարում: Այդ վարժություններն օժանդակում են մարդու առողջության ամրապնդմանն ու պահպանմանը: Այս կապակցությամբ դրանք անփոխարինելի են, որովհետև մարդու տրամադրության տակ չկան այլ միջոցներ, որոնք կարողանային այդքան դրականորեն ու բազմակողմանիորեն ներգործել օրգանիզմի վրա, ինչպես ֆիզիկական վարժություններն ու բնական գործոնները՝ օդը, ջուրը և արևը: Դեռևս Արիստոտելը այն համոզման էր, որ միտքը ավելի պայծառ է լինում, երբ մարմինը փոքր-ինչ տաքացած է զբոսանքով:

Պատմությունը լի է փաստերով, երբ ֆիզիկական կուլտուրան ու սպորտը մարդու կյանքում ունեցել են առողջապահական մեծ, նույնիսկ բուժիչ նշանակություն:

Անհավատալի ճանապարհով դեպի մեծ սպորտ եկավ մարմնամարզության գծով աշխարհի, օլիմպիական, ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ Հրանտ Շահինյանը: Հայրենական մեծ պատերազմի մասնակիցը տուն վերադարձավ վիրավոր ոտքով: Նույնիսկ բժիշկներն էին երկմտում. մի՞թե նա կկարողանա շարունակել պատանեկան տարիներին սկսած մարզումները:

Սիստեմատիկ բուժական ֆիզկուլտուրան փոխարինվեց մարզումներով, ու արդեն սկսած 1949 թվականից, երբ Հրանտ Շահինյանը դարձավ Սովետական Միության չեմպիոն, սկիզբ դրվեց նրա սպորտային մեծ նվաճումներին:

Կան նաև տվյալներ, որ ֆիզիկական վարժություններով պարբերաբար զբաղվող մարդկանց տարիքը 10-15 տարով փոքր է երևում չմարզված մարդու տարիքից, այսինքն՝ սպորտով զբաղվող 50 տարեկան մարդու աշխատունակությունը հավասար է սպորտով չզբաղվող 35 տարեկանի աշխատունակությանը:

Մարդկանց աշխատանքի ու կենցաղի պայմանների փոփոխությունները, սահմանափակ շարժողական գործունեությունը, հատկապես աշխատանքի միօրինակությունը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան լարված աշխատանքը բացասական ազդեցություն են ունենում օրգանիզմի վրա: Այս պարագայում անհրաժեշտություն է դառնում ֆիզիկական կատարելությունը:

Փաստերը վկայում են, որ մեր բնակչության որոշակի մասը աղոտ պատկերացում ունի մարմնի մկանային զանգվածի գործունեության, սրտի աշխատանքի ու նրա մկանների սնուցման մեխանիզմների, առանձին օրգանների աշխատանքի ու փոխադարձ կապի մասին: Այդպիսի անիրազեկության հետևանքը լինում է այն, որ հատկապես նրանք, ովքեր ֆիզիկական վարժություններով զբաղվում են ինքնուրույն, երբեմն օգուտի փոխարեն վնաս են հասցնում սեփական մարմնին:

Մարդու աշխատունակությունը միշտ միևնույն մակարդակի վրա չի մնում: Նա փոփոխվում է աշխատանքային օրվա ընթացքում, տևական լարված աշխատանքի պատճառով աստիճանաբար սկսում է նվազել, և ի վերջո վրա է հասնում հոգնածությունը: Անընդհատ լարված մտավոր աշխատանքի հետևանքով մեծ ծանրաբեռնվածություն է առաջանում գլխուղեղի վրա, որն ուղեկցվում է գլխացավերի, նյարդային լարվածության և այլ բնույթի տհաճ ինքնազգացողությամբ: Հետևաբար, գլխուղեղի անոթային համակարգի գործունեության բարելավմամբ հնարավոր է զերծ մնալ այդ տհաճություններից: Անոթային այդպիսի առատ ցանց, ինչպիսին տեղավորված է գլխուղեղում, չկա օրգանիզմի որևէ այլ օրգանում: Բավական է ասել, որ ուղեղը սնող արյունատար անոթների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 1500 կմ: Ապացուցված է, որ ֆիզիկական համապատասխան վարժությունների, մերսման և մի շարք այլ համալիր միջոցառումների չափավոր և հետևողական կիրառման շնորհիվ հնարավոր է հասնել դրական արդյունքների: Վարժությունների օգտագործման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում արյան անոթների պատերի առաձգականությունը պահպանելու, անոթների պատերին նյութերի կուտակումը արգելելու, հետևաբար՝ արյան առատ հոսքի ապահովումը դեպի ուղեղի հյուսվածքներ: Գլխուղեղի անոթների վրա դրական ներգործություն են ունենում շնչառական վարժությունները: Պարանոցի շրջանի մերսումը նույնպես արդյունավետ ներգործություն է ունենում մտավոր լարվածությունը վերացնելու գործում:

Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ մարդու օրգանիզմը հարմարվելու, վերափոխվելու, կատարելագործվելու արտակարգ ընդունակությամբ է օժտված: Ֆիզիկական վարժությունները՝ որպես անհատի ֆիզիկական կատարելագործման կարևոր միջոց, մարդկությանը հայտնի են եղել դեռ շատ դարեր առաջ, ուստի, առաջնակարգ տեղ են հատկացրել դրանց: Մարզումների շնորհիվ տեղի է ունենում մարդու ֆիզիկական որակների ու հմտությունների կատարելագործում, ավելի են զարգանում նրա արագաշարժությունը, ուժը, դիմացկունությունը, ճարպկությունը: Մարզումների ժամանակ զարգանում են ոչ միայն թվարկած որակները, այլև կատարելագործվում է մարդու ներքին օրգանների գործունեությունը: Ֆիզիկական վարժությունների ազդե-

ցության տակ ակնհայտ բարեփոխության են ենթարկվում մկանային հյուսվածքները, նրանց արյուն մատակարարող մազանոթները, կմախքի ոսկորները:

Մարդու օրգանիզմը մի ամբողջություն է կազմում շրջապատող արտաքին միջավայրի հետ: Եվ այն փաստորեն անընդհատ պետք է համակերպվի արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններին, որպեսզի կարողանա նորմալ գոյակցել: Բավական է խախտվի համակերպման բնականոն պրոցեսը, և տեղի կունենա օրգանիզմի ֆունկցիաների խախտում, վրա կհասնեն հիվանդագին երևույթներ:

Կոփման ֆիզիոլոգիական էությունն այն է, որ արտաքին միջավայրի գործոնների պարբերական կրկնումներով և աստիճանական ներգործությամբ օրգանիզմը հարմարվում է այդ գործոնների ազդեցությանը: Մարդն առողջ է համարվում, եթե նա ոչ միայն հիվանդ չէ, այլև ներդաշնակ, ֆիզիկապես զարգացած է իր տարիքին համապատասխան:

Ընդհանուր զարգացնող վարժությունները (ԸԶՎ) մարմնամարզության այն հիմնական միջոցներն են, որոնք լայնորեն օգտագործվում են ֆիզիկական դաստիարակության և տարբեր մարզաձևերի պարապմունքներին: Այդ վարժությունները բազմաբնույթ են, օրգանիզմի վրա ունենում են ինչպես ընդհանուր, այնպես էլ տեղային ներգործություն: Դրանք կատարվում են ինչպես առանց առարկաների, այնպես էլ առարկաներով, վարժակցի օգնությամբ: Վարժությունների միջոցով կարելի է ընտրովի ներգործություն ունենալ մարմնի առանձին մասերի և մկանախմբերի վրա: Այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս զարգացնել և ամրապնդել ինչպես շարժողական ապարատը, այնպես էլ ներքին օրգանների ֆունկցիան:

ԸԶՎ-ից օգտվելիս բեռնվածության կարգավորումը համեմատաբար հեշտ է: Այն կախված է համալիրում ընդգրկված վարժությունների բովանդակությունից, քանակից, կրկնությունների չափից, տեմպից և ընդմիջումներից: Վարժությունները պետք է կատարվեն սիստեմատիկ, բավարար լարվածությամբ և մկանային աշխատանքի տարբեր ռեժիմներով: Դա կնպաստի մկանի ուժի, կծկման արագության, ճկունության և շարժողական մյուս հատկությունների մշակմանը:

ԸԶՎ-ը առավելապես տեղային ներգործության նպատակ ունեն, ուստի, նրանք դասակարգվում են ինչպես կազմաբանական, այնպես էլ ֆիզիոլոգիական սկզբունքներով.

1. վարժություններ ձեռքերի և ուսագոտու մկանների համար,

2. վարժություններ իրանի և պարանոցի մկանների համար,

3. վարժություններ ոտքերի մկանների համար,

4. վարժություններ ամբողջ մարմնի մկանների համար:

Ֆիզիոլոգիական դասակարգումը հետևյալն է՝

1. ուժային վարժություններ,

2. ձգողական (ճկունության) վարժություններ,

3. թուլացման վարժություններ:

ԸԶՎ-ի համալիրներ կազմելու համար դասակարգման այս երկու ձևերի բովանդակության իմացությունը շատ կարևոր է: Դա անհրաժեշտ է ինչպես վարժությունների ընտրության, այնպես էլ համալիրում նրանց մեթոդապես ճիշտ տեղադրման համար:

Մարդու ամենասովորական շարժողական գործողություններից մեկը քայլքն է: Մեծ է քայլքի կենսական և առողջական նշանակությունը, որի շնորհիվ օրգանիզմի կենսագործունեության բազմաթիվ պրոցեսներ ընթանում են կանոնավոր ու անթերի: Ի՞նչ է նշանակում ճիշտ քայլք: Դա չի նշանակում միայն որոշակի ժամանակի ընթացքում ինչ-որ կերպ տարածություն հաղթահարել՝ համապատասխան էներգիա վատնելով: Ճիշտ քայլելու կարևորությունը չի սահմանափակվում նաև քայլողին և շրջապատին գեղագիտական հաճույք պատճառելով, տրամադրությունը բարձրացնելով, չնայած դա նույնպես կարևոր է: Քայլքի ժամանակ գլուխը կախ գցած, թիկունքը կորացած, կուրծքը ներս, ձեռքերը գրպանում, որովայնը առաջ ցցած վիճակը օրգանիզմի ներքին օրգանների, ինչպես նաև մկանային զանգվածի համար նպաստավոր չի կարող լինել: Քայլքի ընթացքում ամբողջ մարմինը պետք է պահել ուղղաձիգ՝ հպարտ կեցվածքով, գլուխը՝ ուղիղ, հայացքը՝ հեռու, պարանոցի մկանները՝ առանց ավելորդ լարելու:

Մարդու առողջության պահպանման ու կոփման համար միայն քայլքը բավական չէ. քայլքին աստիճանաբար պետք է հաջորդի հավասարաչափ, տվյալ անհատի առողջական վիճակին ու ֆիզիկական պատրաստությանը համապատասխան չափավորված, դանդաղ տեմպով տևական վազքը: Նպատակահարմար է վազքային պարապմունքները կազմակերպել կանաչապատ տարածքում (հնարավորության սահմաններում): Այդ տարածքով վազելու ժամանակ օրգանիզմի, հատկապես ողնաշարի և հոդերի վրա մարմնի ծանրության ազդեցությունը մեծ չի լինում, հետևաբար, ավելի հաճելի պայմաններում է ընթանում վազքը, բարերար ներգործություն ունենում օրգանիզմի վրա: Եթե մինչև վազքային վարժություններ սկսելը ֆիզիկական վարժություններով կանոնավոր չեք պարապել, ապա առաջին մի քանի վազքապարապմունքներից հետո ցավեր կզգաք վերջույթներում և մարմնի այն մասերում, որոնց վրա է ընկել ֆիզիկական ծանրաբեռնվածությունը: Կանոնավոր պարապմունքների ընթացքում աստիճանաբար կվերանան այդ ցավերը:

Վազքատարածությունը աստիճանաբար ավելացնելը պետք է տեղի ունենա բնականոն: Օրգանիզմը պետք է զգա դրա պահանջը: Վազքի արագությունը արհեստականորեն ավելացնելը նպատակահարմար չէ: Ամենօրյա 15-16 րոպե դանդաղ վազքը՝ համակողմանի ֆիզիկական վարժությունների հետ, բավական է, որպեսզի դուք պահպանեք ձեր առողջությունը:

Ֆիզիկական վարժություններով նպատակասլաց պարապելու համար յուրաքանչյուր անհատ պետք է ունենա որոշակի անհրաժեշտ գիտելիքներ: Նա պետք է իմանա և կյանքում իրագործի օրգանիզմի վրա ծանրաբեռնվածության ազդեցության օրինաչափությունը, իր ուժերի ու կարողությունների դրսևորման հնարավորությունները: Հնարավոր չէ ձեռք բերել անհրաժեշտ ֆիզիկական պատրաստականություն, առավելագույն չափով դրսևորել ֆիզիկական ուժերը, եթե մարդ չի տիրապետում ֆիզիկական վարժությունների տեխնիկային, չի կարող կիրառել դրանց կատարման ամենաարդյունավետ ձևերը: Հենց սկզբից պետք է սովորել յուրաքանչյուր վարժության ամենափոքր շարժումը կատարել պատշաճ կարգով, ոչինչ չկատարել իմիջիայլոց, մի կերպ: Ոչ մի վարժություն չպետք է կատարել առանց նպատակի: Եթե այն կատարվում է միայն ձևի համար, ապա նման բնույթի կատարումը ոչ մի արդյունք տալ չի կարող:

Շնչառությունը օրգանիզմի և շրջապատող միջավայրի միջև տեղի ունեցող գազափոխանակության բարդ գործընթաց է, որի շնորհիվ օրգանիզմը միջավայրից վերցնում է թթվածին և անջատում ածխաթթու գազ: Մեկ րոպեում թոքեր մտնող և դուրս եկող օդի ծավալով բնորոշվում է թոքերի րոպեական օդափոխությունը, որը մարդու համար հանգիստ պայմաններում կազմում է 8-10 լիտր:

Շնչառությունը կազմված է ներշնչման և արտաշնչման փուլերից, որոնք փոխկապակցված են: Շնչառության հետ կապված կրծքավանդակի ռիթմիկ շարժումները իրականացնում են շնչառական մկանները:

Ապացուցված է, որ մարդիկ տարբեր առաջադրանքներ, ֆիզիկական վարժություններ կատարելիս երբեմն դժվարանում են շնչել, երբեմն շնչում են արագ, նույնիսկ հևոցով: Ֆիզիկական վարժություններ կատարելիս շնչառությունը պետք է կարգավորել հետևյալ կերպ. ներշնչումը պետք է լինի ավելի կարճատև, իսկ արտաշնչումը՝ 1,5-2 անգամ ավելի երկարատև: Ներշնչման ժամանակ մկանների կծկման ուժը իջնում է, իսկ արտաշնչման պահին մեծանում է, հետևաբար, ուժային վարժությունները նպատակահարմար է կատարել արտաշնչման պահին: Ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ խիստ անհրաժեշտ է շնչառությունը ճիշտ զուգակցել շարժումների հետ:

Ֆիզիկական վարժություններ կատարելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շնչառության տեմպին և ռիթմին: Ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ կարևոր է ճիշտ շնչառության կատարումը.

ա) մարմինն ուղղելիս և արտակորվելիս, ձեռքերը վեր, կողմ, առաջ, բարձր անցնելիս, ոտքերը ուղղելիս անհրաժեշտ է ներշնչել, իսկ առաջ թեքվելիս, ոտքերը ծալելիս, ձեռքերը իջեցնելիս արտաշնչել,

բ) մեծ ճիգ և լարվածություն պահանջող վարժություններ կատարելիս արտաշնչելը պետք է համապատասխանի լարման ամենամեծ պահին,

գ) քայլելիս, վազելիս ներշնչումն ու արտաշնչումը պետք է համապատասխանեն շարժումների որոշակի թվի (օրինակ՝ 2 քայլ՝ շնչել, 4 քայլ՝ արտաշնչել): Պետք է շնչել քթով ու կիսաբաց բերանով, ըստ որում՝ կարևոր է հետևել լրիվ և ակտիվ արտաշնչմանը:

Աշխատունակությունը, որով պայմանավորված են աշխատանքի արտադրողականության տատանումները, փոփոխության է ենթարկվում ինչպես օրվա ընթացքում, այնպես էլ շաբաթվա տարբեր օրերին ու տարվա մեջ: Հետևաբար, հանգստի կազմակերպումը դառնում է անհրաժեշտություն: Աշխատունակության պահպանման կարևորագույն միջոցառումներից են մարմնամարզական դադարները, 5-10 րոպե տևողությամբ հանգստի կազմակերպումը:

Հանգստի ձևերը բազմաբնույթ են՝ կարճատև կամ տևական, պասիվ կամ ակտիվ, աշխատանքի ընթացքում կամ աշխատանքից հետո: Ակտիվ հանգստի միջոց է նաև մեկ բնույթի աշխատանքի հերթագայումը բոլորովին մեկ այլ բնույթի աշխատանքով: Սա վերաբերում է ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր աշխատանքին ու գործունեությանը: Հաճախ մտավոր աշխատողները լարված աշխատանքից հետո շախմատ են խաղում, որը ոչ պակաս մտավոր լարվածություն է պահանջում խաղացողից: Սակայն, քանի որ շախմատ խաղն այլ բնույթի մտավոր աշխատանք է, այն ապահովում է օրգանիզմի համապատասխան հանգստի վիճակը:

Առողջության ամրապնդման ու կենսուրախ կյանքի համար ֆիզիկական վարժություններով զբաղվելը երբեք էլ ուշ չէ: Շարժումների սահմանափակվածությունը վտանգավոր է օրգանիզմի համար ընդհանրապես՝ անկախ տարիքից ու սեռից, քանի որ հնարավորություն չի ստեղծում մարդու սրտանոթային, շնչառական, նյարդային համակարգերի, մկանախմբերի և ամբողջ օրգանիզմի զարգացմանը, օրգանիզմը ընտելանում է անգործության, հետևաբար և տեղիք է տալիս ճարպակալմանը, կարճատեսությանը, մարսողության խախտմանը, որոնք բացասաբար կանդրադառնան մարդու կյանքի նորմալ ընթացքին ու նրա գործունեությանը: Բնական է, որ մարդու ֆիզիկական կատարելագործման բացը պետք է լրացվեն մտածված և պլանավորված հատուկ ֆիզիկական պարապմունքներով:

Շավարշ ՂՈՒԿԱՍՅԱՆ
ԼՂՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող

ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

ԱԶԳԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ



Անցյալ դարի վաթսունական թվականներից Ղարաբաղում ձևավորված հրաշալի մտավորական մի խավ կար, որ ինքնակամ լծվել էր հայրենիքից ու իր հարուստ մշակույթից զրկված ղարաբաղյան հատվածին համակցելու ազգապահպան գաղափարներին, նրան հաղորդակցելու հայ ժողովրդի պատմամշակութային յուրատիպ արվեստին, նրա ավանդապաշտ կենցաղային ակունքներին աղերսվող երգին ու պարին, ազգային գեղարվեստա-երաժշտական մտածելակերպին: Նման ազգապահպան ու ժողովրդաստեղծ մշակույթի նորաբողբոջ դալար ծիլերի հետայսու փարթամ աճին զինվորագրված փաղանգի երդվյալ մունետիկներից էր և Սերգեյ Խաչատրյանը:

Երբևէ տեսե՞լ եք հմուտ ու փորձառու հացթուխին, որ խմորի տաշտից գնդիկներ է պատրաստում՝ դրանցից թոնրի կարմրած թշերին կարմրերես հաց թխելու բարի նպատակով: Այնուհետև թեքև ցողված հարմար տախտակին հացթուխը հերթական խմորագնդիկը հետ ու առաջ կգլորի, վեր ու վար կանի, ճկուն մատների ու փափուկ ափերի գուրգուրանքով գնդիկը մի պահ կանշարժանա, ալրոտ ափերով մատները գնդիկից կկսմթեն ավելորդ մի ծվեն խմոր ու մի կողմ կգցեն, իսկ գնդիկը մի երկու անգամ ևս ափերով շոյվելուց հետո կանշարժանա մյուսների քով: Հացթուխը ներքին դողով ու հոգու չափիչով ինչպե՞ս կզգա գնդիկի ծանրն ու թեթևը՝ լոկ Աստծուն է հայտնի: Սակայն նրա գնդած գնդիկներից թոնրի թշերին թխված բոլոր հացերը իրար նման կլինեն. հավասա՛ր-հավասա՛ր, կարմիր ու տռուզ թշերո՛վ ու, համե՛ղ և հրապուրի՛չ...

Սերգեյ Խաչատրյանի բեմադրած պարերն էլ հմուտ հացթուխի հացերի պես էին. բոլորը՝ շքեղ ու գայթակղիչ, բոլորը՝ բովանդակալից ու սյուժետային գծի գրավչությամբ: Սակայն ոչ միայն պարերի բեմադրության վարպետ էր նա, այլև անզուգական կազմակերպիչ, մանկապատանեկան ու երիտասարդական ինքնագործ տասնյակ ու տասնյակ երգեցիկ խմբերի հիմնադիր-ղեկավար, իր նվագով արբեցնող ակորդեոնահար, աշխարհի բազում ժողովուրդների տարաբնույթ պարերի խորագնա գիտակ, մեր ավանդական դիոլով տասնյակ պարերի ռիթմական զարմանազան պատկերների անպատմելի վիրտուոզ վերարտադրիչ...

Վաթսունական թվականների սկզբին, երբ կուսակցության մարզային կոմիտեն տեղափոխվեց ներկայիս նախագահական նստավայրի քառահարկ կառույցը, երկհարկ հին շենքի երկրորդ հարկաբաժինը տրամադրվեց Կոմիտասի անվան երաժշտական դպրոցին, իսկ առաջին հարկը զբաղեցրեց Ստեփանակերտի Պիոներների տունը:

Մի օր Լևոն Սարգսյանը երաժշտական դպրոցի ժողնվագարանների իր բարձր դասարանցիներիս ուղեկցեց Պիոներների տուն, ուր Սերգեյ Խաչատրյանը յոթնասուն մասնակցով երգի ու պարի ստվար խումբ էր կազմակերպել: Ընդգրկվեցինք խմբի երաժշտական կազմ: Թրծվեցինք, բեմական հույժ կարևոր պահվածք ու դաստիարակություն ստացանք, տասնյակ ու տասնյակ անգամներ ինքնագործ գեղարվեստական կոլեկտիվների կազմում ելույթներ ունեցանք Ղարաբաղում ու Բաքվում, շրջկենտրոններում ու գյուղական մշակույթի տներում:

Սերգեյ Վարդանովիչ: Այսպես էինք դիմում նրան: Ինքը մեզ՝ «բալիկս» կամ «բալիկ ջան»: Պատանյակներիս կուռքն էր, մեր ընկերը, մեր խորհրդատուն: Միայն երկու դեպքում էր վրդովվում. երբ նկատում էր, որ փորձից առաջ արևածաղիկ էինք չրթում ու, մեկ էլ, երբ պաղպաղակ էինք ուտում: Բոլորի հետ գրական հայերենով էր խոսում. դա էլ հայտնի չափով դաստիարակում ու ներքին կազմակերպվածություն էր հաղորդում մեզ: Գիտեր իր սաներին սիրելու «սամբը»: Չէր բռնանա քո արտահայտած կարծիքին: Համերգային ելույթների ժամանակ յուրաքանչյուր տարր հաշվի կառներ: Ակորդեոնը քնատակերին ագուցած, արտահայտիչ հայացքի շարժումներով բեմին կշարի երգչախմբին, պարային կազմի մասնակիցներին նշանացի կիսակացնի բեմական ելումուտը ու... համերգին ընթացք կտար: Բեմը կվերածվեր աշխատող հսկա մի շարժիչի: Հուշիկ նազանքով բեմում կսահեին «Հայկական պարի» չքնաղատես աղջիկներն ու ընդոստ աճապարանքով խիզախ ռազմիկները, լեռնցի դաղստանցիների քաջազուն ու կայծկլտուն «Լեզգինկային» կփոխարինեին վրացիների «Լեկուրին», ապա ուստյուններով ու խորամանկ աչքունքով ուկրաինական «Հոպակին», շունչ կտային ածիլած գլուխների կենտրոնում թողնված երկար քանքուլներով շաղակրատ խախոլները... Ռուսական «Կազաչոկից» մնացած խրոխտ թնդյունների ոգին մեղմելու համար է, որ բեմը մեկեն կողողվի աննման լեհուհիների «Պոլկայով», մոլդովական «Դոյնաի» հուզաքաթախ ու մեղրածոր մեղեդիներով, հայոց «Նազանիով»: Բեմը գլխապտույտ կունենար խոշորագլուխ շերեփներով զինված «Խոհարարների պարից»: Դահլիճը կցնծար բնաբուխ այս արարներից, երգչախմբի ու մեներգիչների զուգանկար երաժշտապատկերներից... Այսպիսի երջանիկ պահեր կնվիրեր իր «բալիկներին» Սերգեյ Խաչատրյանը,ու մենք երանությամբ ողողված հայացքներով կրկին բեմ կելնեինք...

Ո՞վ չի հիշում գողտրիկ մեր Ստեփանակերտի Մանկական զբոսայգին, որի կենտրոնական շատրվանի քով ամեն տաքուկ ամառ մանկապատանեկան պարահանդեսներ էր կազմակերպում Սերգեյ Վարդանովիչը: Հապա պետբանկի երկրորդ հարկում տեղակայված մշակույթի քաղաքային տան խաչատրյանական հոծ խու՞մբը, ապա գյուղատնտեսական տեխնիկումի չքնաղատես պարային անսա՞մբլը, հապա այն տարիների Ստեփանակերտի մշակույթի շրջանային տան նրա բեմադրած գունեղ պարե՞րը...

Սերգեյ Խաչատրյանի համախոհ գաղափարակիցն էր Շուշիի թիվ երկու գիշերօթիկ դպրոցի սիրված ու փորձառու տնօրեն, հանրապետության վաստակավոր մանկավարժ, իր ժողովրդին նվիրյալ Արսեն Խաչատրյանը: Այդ նրա հեռահար ու հայրենանվեր, ազգապահպան ճիգերի շնորհիվ էր, որ Սերգեյ Խաչատրյանը տասնյակ տարիներ հայ երգ ու նվագ ուսուցանեց գիշերօթիկի սաներին, նրանց մրցույթների ու փառատոների առաջնորդեց, գիշերօթիկի սաներին հայոց երաժշտության «այբ ու բեն-ը» սովորեցրեց... Արսեն ու Սերգեյ Խաչատրյանները երդվյալ հայեր էին: Այդպես էլ մնացին ժամանակակիցների հուշերում:

Սերգեյ Խաչատրյանը դադար չէր սիրում: Նա անվերջ գործում էր, անվերջ բեմադրում, անվերջ խմբեր կազմակերպում իր կախարդական «բալիկս» ու «բալիկ ջանով»: Այդ նրա հավաստած ուղեգրերով են կյանք մտել տասնյակ ու տասնյակ պարողներ. հանրապետության ժողովրդական արտիստ Աշոտ Բաբայանը, անժամանակ կյանքից հեռացած, հանրապետության վաստակավոր արտիստ Ռոբերտ Գրիգորյանը, մշակույթի վաստակավոր գործիչ Ռոմա Խաչատրյանը, Վալերի Գրիգորյանը, Էլմիրա Բաբայանը, բազում շնորհալիներ:

Հրաշալի դիմագծերով գեղեցիկ տղամարդ էր: Հեռվից իսկույն կնկատես իր հաճելի, պարողին բնութագրիչ քայլքով, հպարտ վեհակեցությամբ: Կքայլի անշտապ՝ մայթին դրոշմելով իր պարաքայլերը: Երբ աղջնակներին հայկական նազանի քնքշությամբ օծված պարաշարժումներ էր սովորեցնում, ապշում էինք իր թևերի՝ փխրուն և արտահայտիչ, հուլունքաշար ապարանջան հիշեցնող մանրահատիկ հյուսվածքներից: Պարերի ուսուցման իր յուրօրինակ ձևն ուներ. մատչելի, դյուրին ու անթերի: Օգնում էր տասնյակ կոլեկտիվների: Գնում էր, բեմադրում, գործն ավարտում ու հետ գալիս:

Պիոներների տան մեր ինքնագործ խմբի մասնակիցն էր և չարաճճի ու գեղեցկատես, միշտ ուրախ ու ժպտերես Զոյա Շաքարյանը՝ Մոսկվա հղված հայտնի «13-ի նամակի» հեղինակներից Սերգեյ Շաքարյանի դուստրը: Մի անգամ հորդորեցինք նրան հարցով դիմել Սերգեյ Խաչատրյանին, թե քանի՞ տեղ է աշխատում նա: Զոյան անվախ էր ու խիզախորեն մոտեցավ, հարցրեց.

- Սերգեյ Վարդանովիչ, քանի՞ տեղ եք աշխատում...

Պատասխանը հնչեց անմիջապես ու հումորով թաթախված.

- Բալիկ ջան,-ասաց,-դու ավելի լավ է հարցրու, թե քանի՞ տեղ չեմ աշխատում...

Բացառիկ բարյացակամ անձնավորություն էր, առանց տողատակի մտքերի: Իր հանգիստը լոկ աշխատանքի մեջ էր գտնում ու երջանիկ էր սաներով, իր «բալիկներով», իր ազգանվեր գործունեությամբ, իր վճիտ ապրելակերպով, իր անձնուրացությամբ:

Ափսոսում ես, որ ժամանակին նա ըստ արժանվույն չգնահատվեց իշխանությունների կողմից, չնայած Սերգեյ Խաչատրյանը Արցախ-Ղարաբաղի մշակույթի հարուստ տարեգրության մեջ վաղուց գրավել է իր պատվավոր տեղը ու ցայսօր էլ շարունակում է փայլել առաջին մեծության աստղին վայել իր լույս շքեղությամբ:

Ընդունիր անձիդ հանդեպ տածվող իմ խոնարհումը, սիրելի Սերգեյ Վարդանովիչ:

Սերգեյ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՌԴ կոմպոզիտորների միության Մոսկվայի բաժանմունքի անդամ,
ՀՀ կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության անդամ,
ՀՀ ժուռնալիստների միության անդամ

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Մեծատառով անձնավորություն, պարզ, ազնիվ ղեկավար, հմուտ մանկավարժ ու հարգված քաղաքացի: Այսպիսի բարեմասնություններով է բնությունն օժտել ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Խորեն Վարդանյանին:

Հանգամանքների բերումով՝ Խ. Վարդանյանին 18-ամյա աշխատանքային գործունեության ընթացքում վիճակվել է աշխատելու տարբեր բնագավառներում. որպես մաթեմատիկայի ուսուցիչ, ոստիկան, Շահումյանի շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար, ՍՕՏԳ բաժնի պետ, իսկ 2010թ.-ից առ այսօր Շահումյանի շրջանի կրթության բաժնի վարիչն է: Նշված բոլոր ոլորտներում նա կարողացել է իրեն հմտորեն դրսևորել որպես պարտաճանաչ ու աշխատանքին նվիրված անձնավորություն՝ պատվով հաղթահարելով իր առջև դրված ցանկացած խոչընդոտ:

Լինելով կրթության բաժնի վարիչ՝ անչափ մեծ հարգանք է վայելում շրջանում, աչալրջորեն հետևում է յուրաքանչյուր դպրոցում իրականացվող կրթական գործընթացին: Օժտված լինելով մարդկային վսեմ առաքինություններով՝ նա կարողանում է լսել ու հասկանալ դիմացինին՝ անհրաժեշտության դեպքում՝ օգնում խրատներով: Նրա ձեռնարկած յուրաքանչյուր գործ միտված է միայն դպրոցականների ուսուցման գործընթացը ճշգրիտ կազմակերպելուն:

Շնորհավորելով ծննդյան օրվա առթիվ՝ մաղթում ենք Ձեզ բեղմնավոր աշխատանք, առողջություն, նորանոր ձեռքբերումներ ու հաջողություն կյանքի բոլոր քառուղիներում: Թող իրականություն դառնան Ձեր հոգում պահած բոլոր իղձերը: Կյանքի լեփ- լեցուն աստեղային ժամեր ենք կամենում:

Միշտ եղեք այդպես բարի ու անաչառ, լի եռանդով՝ ամուր կրթական օջևան դարձնելով շրջանի բոլոր ուսումնական հաստատությունները, քանզի շրջանի ապագան Ձեր և մեր ձեռքերում է:

ԼՂՀ Շահումյանի շրջանի
Քարվաճառի Վ. Սարոյանի
անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Մենք՝ հայերս, մեր չմարող հիշողությունն արյան միջոցով փոխանցում ենք սերնդեսերունդ: Մենք մեր հիշողության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ նահապետից մինչև հավերժություն: Ուստի, պետք է ուժ առնենք մեր մեծագույն մանկավարժներից՝ Խ.Աբովյանից, Մ.Նալբանդյանից, Ռ.Պատկանյանից, Ղ.Աղայանից: Նրանցից վերցնենք ազգային մտածողության լավագույնը, ինչն այսօր էլ արդիական է:

Դպրոցներում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքները կարծես թե շատ ազգային են, բայց սովորողների մեջ դրանք թույլ նստվածք են տալիս, ինչը մտահոգիչ է: Ազգային ոգին հայեցի դաստիարակության նախադրյալն է: Այն պետք է ակունք առնի ընտանիքից, իր խոր արմատները ձգի մանկապարտեզից մինչև դպրոց, դպրոցից՝ կյանք: Երևի բոլորդ դիտել եք վերջերս «Շանթ» հեռուստատեսությամբ ցուցադրված Արտյոմ Երկանյանի «Թոռների պատասխանը» փաստավավերագրական ֆիլմը, որտեղ պարզ երևում են թուրք ժողովրդի մի զգալի մասի ներողությունները և ցավակցությունները հայ ժողովրդին: Ֆիլմում ցուցադրվեց, թե ինչպես արյունարբու Ջեմալ փաշայի թոռն այցելեց Հայաստան և Ծիծեռնակաբերդում, ի հիշատակ Եղեռնի զոհերի, ծաղիկներ դրեց:

Ամեն ինչ շատ գեղեցիկ է բարոյական դաստիարակության տեսանկյունից, շատ հուզիչ: Անձամբ ես շատ եմ հուզվել: Բայց եկեք հասկանանք. եթե այսօր թուրք ժողովրդի մի մասը ներողություն է խնդրում, դա դեռ չի նշանակում, որ այդ նույն բանն անում է թուրք դիվանագետը: Մենք դարեր շարունակ եղել ենք ընդամենը պաշտպանվողներ, դիմադրողներ, երբեք մեր շուրթերից ռազմատենչ հայտարարություններ չեն հնչել, երբեք հրադադարի կանոնները չենք խախտել, երբեք ուրիշի ունեցվածքին աչք չենք դրել, ու ավելին, մեր ազգային դաստիարակությունը, մեր բարոյական դիմագիծն այնքան բարձր մակարդակի վրա են, որ հենց մեր կողմից եղավ առաջարկություն՝ նստել բանակցությունների սեղանի շուրջ: Բայց նրանց վերաբերմունքը փաստեց, որ թուրքը ընդամենը բռնացող է: Ես հիմա ուզում եմ հասկանալ՝ Արտյոմ Երկանյանի պատրաստած ֆիլմը, որը մրցանակի էին արժանացրել, ավելի շատ ո՞վ ուներ նրա կարիքը՝ մե՞նք, որ միշտ թիրախ ենք եղել, թե՞ նրանք, որ խաբեությունը կուռք են դարձրել…Իսկ հասարակ ժողովուրդը, բնական է, պետք է «ո՛չ» ասի պատերազմներին, որովհետև միշտ էլ տուժող կողմը հենց հասարակ մարդիկ են լինում: Նաև ուզում եմ հասկանալ այն, թե հանուն ինչի են հնչում թուրք մտավորականության ցավակցությունները, երբ իշխանավորները ուղղակի խոչընդոտում են հասարակ ուխտագնացներին Արևմտյան Հայաստան այցելելու:

Օրեր առաջ նույն հեռուստաընկերությանը հյուրընկալվեց Ջեմալ փաշայի թոռ Հասան Ջեմալը, որն իր հետ բերեց հայերի Ցեղասպանության մասին իր հեղինակային գիրքը, ներկայացրեց բովանդակությունը և հայտարարեց իր «պատրաստակամությունը» Հայոց ցեղասպանության ընդունման հարցում, մինչդեռ իր ժողովրդի զգալի զանգվածը տառապում է Էրդողանիզմով: Ինչևէ, սա էլ է քաղաքականություն…

Եթե մենք մեզ Գ.Նժդեհի հետնորդն ենք համարում, ապա ինչո՞ւ չհետևենք նրա պատգամին. «Ժողովուրդ, քո պատմության բոլոր դարերով երդվեցնում եմ սերունդներիդ, չներել, չներել թուրքին, եթե մի օր հանկարծ նրան տեսնես անկյալի վիճակում: Այո՛, ներում են թշնամուն, բայց ոչ իր կեսի սպանիչին, ոչ նրան, որը մի օր փորձեց գոյության գրքից քո էջը սրբել»:

Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ
Մարտունու շրջանի
Քարահունջի հիմն. դպրոցի
դասվար

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԸ

Հայ ժողովուրդը հպարտանալու շատ առիթներ ունի, քանզի նրա տաղանդավոր զավակները վաղուց հատել են ազգային պատկանելության սահմանները և դարձել համայն մարդկության անգնահատելի գանձը գիտության ու մշակույթի ասպարեզում:

Նման երախտավորներից է Արցախ աշխարհի հարազատ զավակ և ողջ հայության փայլուն ադամանդ դարձած Հայկ Խաչատրյանը, որին նվիրված հուշ-ցերեկույթ կազմակերպվեց Ասկերանում: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահի Աշոտ Ղուլյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, պատգամավոր Վարդգես Բաղրյանը, գրող Սոկրատ Խանյանը, Հայկ Խաչատրյանի քույրը՝ տիկին Ժենյան, պաշտոնատար այլ անձինք:

Խոսքը սովորական մի գրողի մասին չէ, այլ մեկ տասնյակից ավելի վեպ ստեղծած մեծ վիպասանի, որի բոլոր վեպերն էլ գրված են պատմական թեմայով: Պատահական չէ, որ նրան մտերմաբար հայկական Վալտեր Սկոթ էին անվանում:

Ականավոր գրողի կյանքն ու գործը ներկայացնող գրող-հրապարակախոս Կոմիտաս Դանիելյանը բացահայտումներ արեց մեզ համար:

Հայկ Խաչատրյանը 1950թ. ընդունվեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Նույն կուրսում էին սովորում ապագա անվանի գրականագետներ Էդվարդ Ջրբաշյանը, Պիոն Հակոբյանը, Ալբերտ Արիստակեսյանը, լեզվաբան Սերգեյ Աբրահամյանը, հրապարակախոս Մարգո Ղուկասյանը: Սա, իհարկե, պատահականություն լինել չի կարող:

Աշխատանքային հիմնական գործունեությունը սկսել է իբրև հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ, լրագրող, դպրոցական տեսուչ և շրջանային ժողկրթբաժնի վարիչ (Կապանի շրջան): Հետո՝ Երևան՝ Արմենպրեսի լրատվական գործակալություն: Եղել է թղթակից, բաժնի վարիչ, գլխավոր խմբագիր, 1965-1971թթ.՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի գլխավոր խմբագրի տեղակալ, ապա, մինչև իր կյանքի վերջը, Հայկական հանրագիտարանի պատասխանատու քարտուղար: Հենց նրա շնորհիվ բարձր մակարդակի վրա դրվեց հանրագիտական գրականության հրատարակման գործը Հայաստանում: 12-հատորյա Հայկական ազգային առաջին հանրագիտարանը, հարկավ, մեր ժամանակների հայ մտավորականության համահավաք մտքի արգասիքն է, ինչի համար էլ Հայկ Խաչատրյանը ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, հանրագիտարանի գլխավոր խմբագիրներ Մակիչ Արզումանյանի, Աբել Սիմոնյանի և գլխավոր խմբագրի տեղակալ Ջավադ Թորոսյանի հետ 1988-ին արժանացել է պետական մրցանակի:

Հետագա բազմաթիվ հանրագիտարանների հազարավոր հոդվածներ հղկվել, շարահյուսական պատշաճ տեսքի են բերվել իր գործի խորագիտակ նվիրյալի՝ Հայկ Խաչատրյանի ձեռքով: Իր «Գրական հիշատակարանում» մի հետաքրքիր վկայություն է բերում մեծ գրողը:

1962թ. Հայաստանում շրջագայում էր ամերիկյան նշանավոր նկարիչ, գրող ու հասարակական գործիչ Ռոքուել Քենտը, որին, որպես Արմենպրեսի թղթակից, ուղեկցում էր Հ. Խաչատրյանը: Մի անգամ Քենտը նրա հոդվածներից մեկը թարգմանել տվեց անգլերեն, կարդաց և ասաց. «Լսի՛ր, բարեկա՛մ, աշխարհի բոլոր կողմերում լրագրողները ջանում են հմտանալ իրենց գործի մեջ՝ հուսալով, թե գուցե իրենց հաջողվի մի օր գրող դառնալ և թողնել լրագրողի դժվար գործը: Դու հակառակն ես անում, լրագրություն ես անում գրողի հաշվին: Աստված քեզ օժտել է գրողի ձիրքով, իսկ դու եկել քո ոսկին պղնձի հետ ես փոխանակում»:

Հ. Խաչատրյանը խոստովանում է. «Դա սթափեցնող կսմթոց էր»:

Առաջին գրքով («Տիգրան Մեծ») նվաճեց ընթերցողի սիրտը: Դարձավ հանրահայտ և ընդգրկվեց ամենաընթերցվող հայ հեղինակների առաջին տասնյակի մեջ: Ավելին, հիշյալ վեպը 1990-ին վերահրատարակվեց 100 հազար օրինակով: Մինչ այդ ոչ մի հայ պատմավեպ, այն էլ 650 էջանոց, միանգամից նման տպաքանակով լույս չէր տեսել: Թերևս, ինչքան էլ զարմանալի թվա, մենք չունեինք այն գիրքը՝ ծավալի ու բովանդակության առումով, որ կպատշաճեր մեր անհաղթ արքային: Հայ գրականության հենց այս բացը լրացնելու եկավ մեր հայրենակիցը իր վեպով՝ լայն կտավի վրա ներկայացնելով հայոց հեթանոսական դարաշրջանը: «Տիգրան Մեծը» բավական կլիներ՝ հայ գրականության մեջ նրա անունը երախտագիտությամբ հիշվելու համար:

Սակայն վիպասանը, չբավարարվելով դրանով, մեկը մյուսի հետևից ընթերցողի սեղանին դրեց «Էրեբունի», «Արտավազդ», «Արտաշես», «Քերթողահայրը», «Խաչխաչ», «Երվանդ Սակավակյաց», «Տրդատ Մեծի խաչը», «Վաչագան» պատմավեպերը: Գրականագետ Սևակ Արզումանյանի բնորոշմամբ՝ արձակագիրը ուղղակի ապշեցուցիչ ճանաչողություն է հանդես բերում, միջավայրը, ժամանակը, պատմությունը ներկայացնում այնպես, ասես ինքը եղել, ապրել է այդ հեռավոր դարերում:

Ինչո՞ւ այսքան պատմավեպ: Հ. Խաչատրյանն ունի շատ կարճ ու դիպուկ պատասխան. հայ մարդու համար պատմավեպը ազգային ինքնությունը պահելու զենքերից մեկն է:

Գովեստների մեջ շատ ժլատ Հովհ. Շիրազը Հ. Խաչատրյանին անվանել է «այս դաժան հայահալած դարում իսկական և զուտ հայասեր-ազգապաշտ գրող»:

Հայկ Խաչատրյանը զբաղվել է նաև հայկական տեղանվանագիտությամբ: Հարյուրավոր բնակավայրեր վերանվանվել են նրա հմուտ գիտելիքների շնորհիվ:

Հայ ընթերցողին հոգևոր սնունդ են պարգևել նաև մեծ գրողի պատումաշարերը՝ «Հացապատում», «Սոսյաց անտառ», «Յոթնախորհուրդ», «Հնախոսարան», «Արքայապատում»: Հայկական հարուստ բառագանձից (մոտ 200 հազար) նա օգտագործել է ավելի քան 180 հազար բառ: Նման «ցուցանիշ» հազվագյուտ գրչի մարդիկ կարող են ունենալ: Հանճարեղ արցախցին մի թուլություն ևս ուներ. նա հայկական օրացույցների հավաքորդ էր և ուներ բազում օրացույցներ ու տարեցույցներ՝ 460-ամյա մատենագիտություն (1513 թվականից մինչև 1973 թվականը):

Այս բոլորը գալիս են վկայելու Հ. Խաչատրյանի՝ եթե ոչ առասպելական, ապա հաստատ դևոնդալիշանական կամ թե լեռյական աշխատասիրության ու անսպառ հիշողության մասին:

Կ.Դանիելյանն անձամբ շատ հպարտ է, որ մի քանի տասնամյակ շարունակ վայելել է այդ երևելի հայի ու առաքինի մարդու մտերմությունը, որ հենց նա է եղել Արցախյան շարժմանը նվիրված իր գրքի՝ «Արցախը՝ չսանձած նժույգ» վեպի խմբագիրն ու առաջաբանի հեղինակը:

Այնուհետև ցուցադրվեց տեսաֆիլմ՝ «Հայկ Խաչատրյանը ժամանակակիցների հուշերում», որում հնչեցին գրողներ Վանիկ Սանթրյանի, Լիպարիտ Սարգսյանի, Վառլեն Ալեքսանյանի, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհ. Այվազյանի գնահատանքի խոսքերը Հայկ Խաչատրյանի մասին: Վ. Սանթրյանի կարծիքով՝ շատ պարկեշտ մարդ էր, Վ. Ալեքսանյանի կարծիքով՝ այդքան բարություն, համբերություն մի մարդու մոտ անհավատալի բան էր, իսկ Հովհ. Այվազյանը, վերհիշելով Րաֆֆու խոսքերը. «Նա, ով լավ չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող այն իսկապես սիրել», նշում է, որ Հայկի պես ոչ ոք գերազանց չգիտեր հայկական տեղանունները:

Իսկ գրող Սոկրատ Խանյանն ընդգծեց այն միտքը, որ մարդկային մտքի պատմության մեջ ձևավորված գաղափարը՝ ապրելու երաշխիքը, վերաբերում է Հայկ Խաչատրյանին: Նա եկավ մեր թագավորական դինաստիաների պատմությունը թարմացնելու և հետագա սերունդներին հանձնելու համար: Դրա համար պետք է խորապես գիտակը լինել մեր ժողովրդի պատմության: Հ. Խաչատրյանի մահով սկիզբ առավ նրա երկրորդ ծնունդը:

ԱրՊՀ-ում արդեն հաճախակի են դարձել Հայկ Խաչատրյանից տրվող կուրսային աշխատանքները, մագիստրոսական թեզերը ևն: Նա հայ ժողովրդի մտավոր խտացումը պահ տվեց սերունդներին և հավերժությանը:

Հայկ Խաչատրյանի ժառանգությունը դարերին պարզված մեր դյուցազնական թուրն է:

Միջոցառումն ընդմիջվում էր գեղեցիկ կատարումներով: Հնչեցին «Էրեբունի-Երևան», «Հայաստան», «Կիլիկիա» երգերը Գեորգի Իսրայելյանի, Այլոնա Բաղդասարյանի, Յուլյա Հայրապետյանի կատարմամբ: Գեղեցիկ կատարումների համար նրանք գրադարանի կողմից պարգևատրվեցին Հայկ Խաչատրյանի գրքերով:

Վերջում բոլոր կազմակերպիչներին իր երախտագիտությունը հայտնեց Հայկ Խաչատրյանի քույրը՝ Ժենյան՝ որոշ հուշեր ներկայացնելով իրենց կյանքից:

Նա շնորհակալություն հայտնեց հայրենի Դահրավի դպրոցը եղբոր անունով կոչելու համար և հույս հայտնեց, որ տարիներ առաջ պետական այրերի տված խոստումը՝ Ստեփանակերտում որևէ փողոց Հայկ Խաչատրյանի անունով կոչել, շուտով իրողություն կդառնա:

Հուսանք, որ անարդար լռությունից հետո, վերջապես Արցախի քանքարաշատ որդուն ականածանքով հիշելու և արժևորելու երթը սկսված է և դեռ երկար կշարունակվի:

Սուսանա ՂԱԶԱՐՅԱՆ
գ. Խնապատ

Խոսք հիշատակի

ՌԻՏԱ ԱՐՄԵՆԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Կյանքի 60-րդ տարում իր մահկանացուն կնքեց հանրապետության վաստակավոր մանկավարժ Ռիտա Արմենակի Պողոսյանը:

Ռիտա Պողոսյանը ծնվել է 1954թ. փետրվարի 2-ին, Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղում:

1961թ. ընդունվել և 1971թ. գերազանց գնահատականներով ավարտել է Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցը, նույն թվականին ընդունվել և 1976թ. ավարտել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով մաթեմատիկայի ուսուցչի որակավորում:

Մանկավարժական գործունեությունը սկսել է 1971 թվականից՝ որպես ջոկատավար, այնուհետ՝ 1987թ. հ. 9 դպրոցում աշխատել է որպես դասվար:

Տարիներ շարունակ եղել է տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ: 2002թ. ճանաչվել է «Տարվա լավագույն ուսուցիչ»:

Մարդկային շիտակ բնավորության տեր էր Ռիտա Պողոսյանը: Որտեղ էլ որ աշխատել է նա, աշխատել է սիրով, պատասխանատվության բարձր զգացումով, ազնվորեն:

Այդ լավագույն հատկանիշների համար էլ եղել է սիրելի և հարգված գործընկերների, աշակերտների, ծնողների և հասարակության կողմից:

Ցավալի է նման ազնվագույն մարդու կորուստը:

Նվիրյալ մանկավարժի, ազնիվ ու շիտակ դասվարի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժին, Հովհ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցի կոլեկտիվ

ԽՈՐՀՈՒՐԴ, ՈՐ ԱՆՄԵՌ ԿՊԱՀԻ

Դաժան, անողոք լուրը անսպասելիորեն շանթահարեց յուրաքանչյուրիս ներաշխարհը... Չկար Սլավիկ Հակոբյանը: Դարանակալ մահը՝ սևասքեմ դեմքով, չխնայեց նրան.

Անչափ դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ մեր շարքերում այլևս չենք ունենա ուրույն խառնվածքի տեր, բացառիկ ուղղամիտ և անշահախնդիր, մշտապես կրքոտ, միայն իրեն բնորոշ խոսք-զրույցով մարդուն:

Սլավիկ Հակոբյանը այն բացառիկներից և, ինչու չէ, երջանիկներից մեկը եղավ, որ երբևէ չունեցավ այլ գայթակղություն: Նա իր ողջ կյանքը ծառայեցրեց մանկավարժի իրոք սուրբ կոչմանը: Ավելի քան 3,5 տասնամյակ կրթության Մարտունու շրջբաժնում աշխատեց որպես դպրոցական տեսուչ: Յուրաքանչյուր տեսչական ստուգայց մանկավարժական ցանկացած կոլեկտիվի համար ոչ այնքան զգաստություն էր ենթադրում, որքան որ՝ ուրախություն: Պաշտոնականությունը, անհաղորդությունը, դիրքի ընդգծումը և այլն ուղղակի խորթ էին նրա մարդկային նկարագրին:

Սլավիկ Հակոբյանը մշտապես շրջապատված էր նվիրյալ հարազատ-բարեկամներով, սրտակից ընկերներով: Այդ տեսակետից նախանձելի հարուստ եղավ: Չունեցավ միայն մի բան՝ դիմակ: Խարխլվեցին արժեքները, համոզմունքները, հարաբերությունները: Բայց ահա նա կարողացավ մնալ իր դեմք-դիմագծով, անկաշառ կեցվածքով:

Սլավիկ Հակոբյանի ապրած իմաստալից կյանքը մարդու և մանկավարժի կոչումը անաղարտ պահելու խորհուրդն ունեցավ: Խորհուրդն այդ անմեռ կպահի նրա հիշատակը ապրողներիս սրտերում:

Ընկերների կողմից

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից սույն թվականի հունվարի 26-ից սկսվում է միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպաիրավական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից միասնական և կենտրոնացված (2015թ. բուհերի ընդունելության), պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2014-2015 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97):

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափսի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311 008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը՝ կցել դիմում-հայտին:

Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները:

12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը 2015թ. փետրվարի 24-ն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 97- 40 - 51 հեռախոսահամարով:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3180: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 19.01.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: